

1907

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ  
ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ

ԱՄՍԱԳԻՐ



Hren.

Հայոց պատմութեան



## «ՄՈՒՐՃ» ԱՄԱՍԳՐԻ ԽՄԲՍԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դեռ այս ժամին ամսում, երբ իշխանութեան կարգապրութեամբ՝ փակից «Հերմէս» տպարանը, «Մուրճ» ամսագրի բոլոր բաժանորդներին ուղարկվեց ծանուցում՝ հրատարակութեան քածանուկուր զաղարման մասին։ Ամսուս հոսանալով քաղաքից, մի շաբթ անձնական և ընտանեկան հանգամանքների ուղարձուվեան ամկարող եղայ վերագանակ Թիֆլիս աւելի փաղ։

Երկար տարիների փորձը և մանուանդ այս տարիվայ անցած-գարձածը հրամայողաբար ստիլում են ինձ վերջ գնել անհատական զահարեսութիւններով տարվող մի գործի, ինչպիսին է «Մուրճը», որ նիսթուկան ահապին վասներ է պատճառել և ինձ Պէտք է նկատել, որ յարցիլի տիկին Վառվառէ Քանոնիանը՝ 1902 թ. յուլիս ամսից ձեռք բերելով այդ ամսագրի հրատարակութեան իրաւունքը նստելին հրատարակիչ Կ. Կրասինիկիսոնից 16,000 րուրլով՝ նաև հոգաց այդ թւականի դիմիցիար (3,000 ր.) ծածկելու մասին։ Այսուհետեւ՝ սկսում 1903 թ. յանվար ամսից՝ «Մուրճի» հրատարակութեան բոլոր ծանրութիւնն ընկած էր ինձ վրա։ Լաւագու զէսի այդ հրատարակութեան բուսպօյն ապագան՝ ևս ոչ մի զահարերութեան տառջ կանց չտուայ, աշխատակով ամսուպիրը գործնել մեր ժաղավուրզը զատախրակով լուրջ և անկախ մի օրգան, որ տնվախ որոնում է ճշմարտութիւնը։ Շատ գուղղաղ կերպով տարէցաւարի աւելունում էր բաժանորդների թիւը, որ 1905 թւականին հասաւ 900-ից մի թիւ, որ այսուամենայնիւ անբաւարար էր ամսագրի ծախքեցը ծածկելու համար։ Այսուհետեւ ուստական յիշափիտութիւնը ստեղծեց կետնքի մէջ նոր ոպայմաններ և հասարակական ոյժերի նոր յուրաքարութիւններ։ Եսացող կենաքը կենաքօնացաւ օրաթիւրթերի և բրօշիւրների շուրջը, և բոլոր անսագիլների բաժանորդները պակասեցին։ Բացի այդ ընդհանուր հանգամանքներից՝ հայկական իրականութիւնն ունիցու և իր ուսունձնույատուկ—զուտ ասիական վայրութայիշականութիւնը՝ իր հականատարակական այլանգակութիւններով, արտայայտաված մի ստրկունողի, խուար, մոլորված և մերկուստիլ միջավայրում...

Դադարեցնելով «Մուրճի» հրատարակութիւնը՝ մենք մեր բաժմանորդներին կուզարկենք № 4-ի այն թիւրթերը, որոնք աըսպ-ված էին «Հերմէս» տպարանի կնքումից առաջ։ Մնացած համարների փոխարէն ցանկացուղները կարող են ստանալ հետեւել հըրատարակութիւնները՝ իրանց գրամական պահանջի համեմատ։ 1) «Հաջի Բաբա» 2 հատոր, ճանապարհածախառվ 4 ր., 2) «Վշտի

ծիծաղ», ճանուպարհածախոսը 1 րո., 3) կ., Ա.-ի «Մի քանի օր Արցախում և Սիսի քում», «Հին ցու», «Ժողովրդի կրթական դորձը մեզանում», իւրաքանչիւր բրօշիւրը 20 կ., 4) բժ. Գ. Ա.-ի «Վնասակար և օպտակար միկրօբների մասին», 30 կ.: Իսկ այն բաժանորդները, որոնք կուղենան իրանց հաշուի մնացորդը դրաւ մոլ ստունալ, թող բարեհաճեն այդ մասին յայտնել ինձ:

Ուզարկելով մեր բաժանորդներին «Մուրձի» առջիւ համարի այն թերթերը, որոնք արգեն տողուած էին մինչև «Հերմես» տպարանի փակումը, պարտք ենք հումարում բացադրել որ բացի այդ տպուածներից շարուած ու տպագրուած էին և թերթի նիւթ և մնում էր միայն գրանց երև կառելլ: Օգոստոս ամսում, երբ վերաբացուց «Հերմես» տպարանը, մինք մեր ցրուիչի միջոցով, նամակով, խնորդել էինք պահել այդ շարուածքը մինչև մեր վերադարձը: Եւ տպարանում խոստացել էին այդպէս անել: Մէջ էր մեր զարժանքը, երբ զիմումին՝ ուղարկել այդ շարուածքների սրբազրութիւնը ստացանք պատասխան: «Գրաշարները արգեն ցըել են»... Այդ անախործ անփութութեան պատճառով թերի են մնում «Անհատն ու միջավայրը» յօղուածը և լոյս չի կարող տեսնել նաև «Մատենաթիոռութիւնը», որով վերջանում էր շարուածքը տպարանի փակման ժամանակ: Նորից շարել տալ ոչնչացրածը շատ գժուար է, որովհետեւ սրբազրուած շարուածքների ձևապրները չեն պահուած:

Լևոն Սարգսեան

Թէֆլիս, 24 հոկտ.

# ԲՐԱՆԴ

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԵՄԱ

Հինգ գործողութեամբ

Հ Ե Ն Բ Ի Կ Ի Բ Ս Ե Ն Ի\*)

ԲՐԱՆԴ. (Երկար նայում է հեռացող ամսոխի յետեւից): Կորապլուխ, յօնքելը կիտած, ծանր, անհաստատ քայլուածքով ինչպէս դատապարտուածներ լուռ ու մունջ գնում են նրանք. ինչպէս դրախտից աքսորուածներ, տանելով ուսերի վրայ մեղքի ծանրութիւնը, ձեռք բերած դիտութեան բեռը, իրենց կորցրած կուրութեան բեռ! Ես երազում էի ստեղծել նոր, կատարեալ, ամբողջացած և մաքուր մարդկանց. իսկ սրանք—Աստու-

\*) Տես «Մուրճ» № 2, 3,: Դիտմամբ բերում ենք այժմ միայն այս կտորը որ առանձին տպաւորուի մեր մեշշանական «հասարակութեան» մերկանոտիլ ուղեղում այս հսկայ երկի իւրաքանչիւր կտորը: Մեր ընթերցողների ուշագրութիւնն ենք դարձնում իրաէնի այս գրուածքի վրայ որ պատկերացնում է դադափարական հսկայ մարտնչողի հետևողականութեան ողբերգութիւնը ժամանակակից մարդկութեան իրականութեան մէջ: Տիրացու ազգ! շուր տուր երեսդ քո «ազգային» բթացնող, ու մոլորեցնող գրականութիւնից և նոր գաղափարներով նոր զգացմունքներով ներշնչուիր, շփուելով համամարդկային մոքի և զգացմունքների կոլոսների հետ:

Ծ. խմբ.

Ապրիլ, 1907.

ծոյ պատկերը՝ չեն, այլ մեղքի կենդանի մարմնացում! Դէ շուտ հեռու այստեղից, — Տիրոջ ասպետին հարկաւոր է լայնարձակութիւն! (Ուզում է զնալ, բայց կանգ է առնում, արին նկատելով Ազնէսին):

Նա իր ամբողջ էութեամբ զգայնօրէն կարծես լը-սում լինի երկնքից մի երգ. կարծես այդպէս ունկն էր դնում և այն ժամանակ երբ ինձ հետ նստած էր ալիքների մէջ պարող նաւակի մէջ, կարծես մի՛ բանի ականչ դնելով նա աջ ձեռքով բանել էր նաւի կողքից, ձախով որբել՝ մարզարտանման փրփուրի շիթերը իր ճակատից. կարծես նրա լսողութիւնը յանկարծ տեսողութեան փոխարինուեց և նա լարուած աչքերով լսում լինէր:

(ՄԵՐՃՆԱԼՈՎ ՆՐԱՆ)

**Զաւակս քո հայեացքը ֆիօրդի ոլորապսոյտներին չէ արգեօք հետեւում:**

**ԱԳՆԻՍ. (Անշարժ).** Ծովի ու ափը անհետացել են աչքերէցս, ես նոր աւելի լաւ և աւելի մեծ երկիր եմ տեսնում. նա բարձրանում մշուշի միջից և պայծառ շրջանակի պէս պատկերանում է: Ես տեսնում եմ այնտեղ գետեր, լճեր, ծովեր, ամպամած կատարներով լեռներ, ամայի, անեզզ անապատի աւազներ. այնտեղ քամու տակ տատանուում են արմաւենիները, աւրեգակը ծնում է թէ ստուերներ և թէ լոյս, միայն կեանքի հետքեր չեն երեսում—ինչպէս երկրի առաջին օրերում: Ահա ինչոք ձայներ եմ լսում. «Հասել է կործանման կամ փրկութեան ժամը. կատարիր, ինչ որ հրամայում է քո պարտքը,—դու կը լրցնես բնակիչներով այդ երկիրը!»

**ԲՐԱՆԴ. (Ոզեւորուած).** Յետոյ: Ասա, էլ ինչ ես տեսնում!

**ԱԳՆԻՍ. (Չեսը կպցնելով կը ծըլին):**

Ես զգում եմ—այստեղ թափառում են ոյժեր, լեռները աճում են և ծովերը եռում, նոր արեգակ է ծա-

գում. սիրտս մեծանում է և ընդդրկում ամբողջ աշխարհը. ես կրկին լսում եմ ձայն. «գու կը լքնես ընտկիչներով այդ երկերը»...! իւրաքանչիւր գործ որ պէտք է կատարուի, ամեն մի միտք որ պէտք է երբեհէ աշխարհ գոյ, —յանկարծ զարթնում են ինչպէս քնից և շտապում կեանքի մէջ իրենց համար տեղ պատրաստել: Եւ այն քաօսի վրոյ—ես Աստուծուն աւելի զգում եմ քան տեսնում. նա հղօր է, պայծառ, սիրալիր, ինչպէս արեի ճառաղայթը, լի անսահման սիրով, բայց լի նոսե մահացու վշտով! Լսիր, լսութեան մէջ ձայներ են հնչում և լուս դողդողալով եմ լսում. «Շտապի՞ր թէ ստեղծել, թէ ստեղծուել,—գու կը լքնես ընակիչներով այդ երկիրս!»

ԲՐԱՆԴ. Դեպի խորքը, դէպի ներսը! Օ, այժմ ես հասկացայ, դա ուղիղ և միակ ճանապարհն է! Մեր հոգին, մեր սիրտը—այն նոր ստեղծած աշխարհն է, ուր պէտք է կեանք վարենք Աստուծոյ մէջ, երբ մենք կը սպանենք մեղսոտ կամքի անդզին, որպէսզի կարողանայ մեր մէջ նոր Ագամ ծնուել! Թող ուրեմն հին աշխարհը գնայ ուր որ գնում էր, հին կոլխարտուած շաւլով, ապատութեան երգով կամ սարկի լծի տակ. իսկ եթէ մենք նրա հետ կընդհարուենք, եթէ նա կըսկի սպառնալ իմ գործը ոչնչացնելու, —ես թշնամու գէմ կըծքով կը գիմագրաւեմ և ինձ համար ճանապարհ կը բանամ...! Տեղ, ընդարձակութիւն և աղատութիւն տուէք ամբողջուկան և իրան հաւատարիմ անհատին! Ահա այն—ժողովրդի իրաւունքը. միայն նրա համար եմ ես պայքարում! (մի ըսպէ խորհնելով): Լինել իրեն հաւատարիմ և ամբողջական...? Ծնքին կըելով հայրերի մեղքերի պարտաքը?!...»

(Կը շաբունակուի)

## ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻ ԶՄԸ \*)

1.

Մարքսի կեանքը, սօցիալ-քաղաքական, նրապարակախօսական գործունէութիւնը եւ զրական վաստակները.

Segui il tuo corso e lascia  
dic le genti.

Հետիիր ճանապարհից, և թող  
մարդիկ խօսին, ինչ ուզում են.  
Գանձէ.

26

Մարքսի խարակտերիստիկան.

(Կհնսագրական յաւելուած)

Մեծ մարդիկ ազատ չեն առանձնայատկութիւններից և «տարօրինակութիւններից»։ Մոլորական մահկանացուներից զատող ամենախոշոր առանձնայատկութիւնը կազմում է հէնց այն մեծութիւնն ու բարձր գիրքը, որ ձեռք է բերում անհատը իր ժամանակից կեանքի որևէ սահմանում։ Ինչպէս որ կան անհատի մեծութիւնը բնորոշող առանձնայատուկ գծեր մարդ աշխարհում, տեսական գործնէութեան սահմանում, այնպէս էլ կան խոշոր գէմքը բնորոշող տրատառվոր էջեր կենդանի զործի աշխարհում, պրակտիկ զործնէութեան սահմանում։ Սակայն խոշոր որակի առանձնայատկութիւններ ու «տարօրինակութիւններ» ունի համարեղ անհատը նաև իր բնաւորութեան մէջ, անհատական կեանքը առանձնական հակումների և սովորութիւնների սահմանում։

Կարլ Մարքսը մի անզուգական զէմք, մի բացտակի տիպ, մի եզակի մեծութիւն է այն դարեշըշանում, ուր նա ծնուել, ապրել և գործել է։ Ով ծանօթ է Մարքսի բովանդակ կեանքի

\*) Տես, «Մուլք», № 2

ու գործնէութեան հետ, նա կը նկատէ առաջին իսկ հայեացքից, որ Մարքսը իր ամբողջ պատմական մեծութեամբ մարմացումն է կազմում հատրնտիր առանձնայատկութիւնների և բացառիկ, արտասովոր բնոյթալիքերի:

Աշխատանքի բազմակողմանի և մանրազննին բաժանման, կրթութեան ու գարգացման միակողմնիութեան ներկայ ժամանակում, էլ աւելի հմայք ու թովչութիւն է ստանում Մարքսի ունիվերսալ զլուխը: Եւրոպայում մանաւանդ, Մարքսի հայրենիք Գերմանիայում, կարինեալի գիտականը մի ֆիլիսոփ քաղաքացի է, հրապարակի վրայ, մի քաղաքական մանուկ է, հասարակական կիանքում, առեւ նըան իր հետախուզութեան և ուսումնասիրութեան ըուլոր յարմարաւոր պարագաները, որպէսզի նա անհատում էներգիայով տքնէ իր կարինեատում, ինքնափոփոք իր ներքին աշխարհը. իսկ թէ ինչ է կատարւում իր կարինեալից գուրս, ինչ կարգեր են տիրում և ինչ կարգեր սլիմու տիրեն հասարակական կիանքում,—գրանց մասին ոչ միայն նա չգիտէ, չէ մտածում, այլև չի ուզում իմանալ ու մտածել: Եւ ընդհակառակը, ամեն մի պրակտիկ գործի, քաղաքական-պարլամենտական խոչը դէմք, մի կատարեալ պրօֆիան է գիտական ուօդիտիւ գործնէութեան սահմանում, կարինեալին ինտենդիւ զբաղմունիքի մէջ:

Քաղաքականութիւն եւ գիտութիւն, պրակտիկ և տեսական գործունութիւն, —սրտմաք տարբեր, ըստ երեսյթին անհաշա ու գուազիստական կողմեր են, հակադրուած միմեանց դէմ, որոնցից իւրաքանչիւրը ունի իր ուլոյն ու զատուած ներկայացուցիւը:

Մարքսի անհատական մեծութեան ամենաարտառոց առանձնայատկութիւնը կայանում է հէնց նրանում, որ նա հիտոքանչ ներգաշնակութեամբ միացնում էր իր մէջ ե՛ւ մէկը, ե՛ւ մուսը: Նա և քաղաքագէտ էր և գիտական և հրապարակի և կարինեալ մարդ, և վառվուն յեղափոխական, կրակու մուրնալիս և սառն ու խորը մոտածող, փիլիսոփայող, թէօրետիկ: Մի թէ միւս առպարեզում փայլեց Մարքսը իր տիսպիք գծերով, իր խոշոր, պատմական արտայայտումներով: Եւ այդ տեսակէտից ոչ միայն 19-րդ դարը, այլև առհասարակ մարգկային հասարակութեան պատմական անցեալը չի տալիս մեզ Մարքսին հաւասար երկրորդ օրիգինալ օրինակը:

Մեզ հետևող ընթերցողը ծանօթացաւ յեղափոխական, հրապարակախօս և քաղաքակ'տ (իբրև ինտերնացիօնակի հմուտ զեկավար) Մարքսի հետ, —կարճ՝ մարքսիստական պրակտիկայի կամ ուրակտիկական մարքսիզմի հետ: Ընթերցողը կը ծանօթանայ գրու-

թեանս ապագայ ընթացքում նաև սոցիալ-փիլիսոփայ, տնտեսագլաւ Մարքսի, կարճ՝ մարքսիստական թէօրիաների կում տեսական մարքսիզմի հետ Մինչ այդ, սակայն, մենք առաջնորդում ենք բնթերցողին դէպի Մարքսի անհատական-բնկերական կեանքի խարակութիւնին, դէպի նրա բնոյթակծերի աշխարհը, հոգեքանական հակումները, ոլոնք նոյնքան ուշագրաւ, տիպիք ու առանձնայատուկ են, որքան մտածող-գործող Մարքսի միւս կողմերն են:

Ա.

Մարքսը ուպիս լնուանիի անդամ (հայր և ամուսին)

Կարլ Մարքսի լուրոր կենսագիրները միատեսակ վկայութիւններ են տալիս նրա մասնաւոր-ընտանեկան կեանքից յարաբերութիւնների մասին։ Նրա մտերիմ ընկերներն ու շրջանակից աշակերտները էնգելս, Լաֆարգ, Լիրինեխտ—ինչպէս և նրա կրտսեր գուստը՝ էլիանօր Մարքս-Աւելինը, մեծ հիացմունքով են խօսում Մարքսի արիւնակցական կապերի, նրա ըստու ու խորարմատ զգացմունքների մասին դէպի իր հարազատները։

Թւում է, ըստ հրեայթին, որ հասարակական ինտիմկոմներով ուժեղ օժտուած ու որակուած անհատը,—գոնէ հեռաւորապէս Մարքսի չափ ու նման,—չպիտի լինէր քնքոյչ ու մեղմալար զգացմունքների տէր իր ընտանեկան կեանքում։ Թւում է, որ չի կարող «ըստանուիկ» ամուսին և «սկնտիմհնտալ» հայր լինել այն պատմական խոշոր գէմրը, որ իր երիտասարդական ծաղիկ հասակից սկսած մինչեւ կեանքի վերջին բոպէն անխնայ ու աննահանջ նուիրուած է եղել հասարակական իզէալին։ որի կեանքի գեվիզը եղել է՝ կոիւ կանգուն հասարակակարգի պահապան սիւների գէմ, —կոիւ խօսքով ու գրչով, կհնդանի, կրակու գործնէութեամբ և գրական անման յուշարձաններով։ որի իդէալը եղել է՝ աղատագրութիւն մարդկային հասարակութիւն տիրապետուողի և տիրապետողի վիճակից, —աղատագրութիւն շահագործուող դասակարգի, ճնշուող սեռի, բոնարարուող ժողովրդի, հուլածուող ազգի։

Սակայն Մարքսը այստեղ ևս մի բացառիկ ներդաշնակութիւն ու հաւասարակշուութիւն պահպանոց իր կեանքի ամբողջ ընթացքում։ Նա միացրեց մամնաւորն ու բնդիանտւրո—ընտանեկանն ու հասարակականը մի անքակտելի ամբողջութեան մէջ և գարձաւ ինչպէս ընտանիքի, այնպէս էլ հասարակութեան լաւպոյն անդամ։ Մարքսի սէրը գէպի իր կինը եղել է անհուն ու անսահ-

ման, սէր ոչ թէ գէպի սասկ կինը, այլ յարգանքով ու պատկառանքով լի սէր գէպի իր մշտագէս կմնակից ընկերը, Գիրմանական խնկերաբիստօկրատի աղջիկը, որի հղբայրը մինիստր էր պրուսական պալատում, եղաւ ամենանկեղծ ու հաւատարիմ կինը, մարտակից ընկերը, զրկանքների և աքսորման զաժան բոպէներին խրախուսիչն ու աջակիցը մի մարդու, որ այնքան մոլեգնութիւնմը հալածեւմ էր պրուս գիրմանական կառավարութիւնից, որին եւրոպական հասարակական-պաշտօնական կարծիքը մեխում էր թունոտ արհամարհանքի և քաղաքական ոչրադութեան սիւնին:

Վերին աստիճանին բարեհոգի, զթառատ ու սիրուլիր էր Մարքսի կինը գէպի Լօնգոն ապահնած բազմաթիւ էմիգրանտները: Վիլհելմ Լիբկնեխտը ուղղակի որդիական խնամատարութիւն ու կրթութիւն է սատացել Մարքսի կնոջից: Նա լինելով բարոյական առաքինութիւններով և մատոր ընդունակութիւններով օժտուած մի լրջմիտ կին, վաստակել էր ամբողջ շըրշապատի խոր յարգանքն ու համակրանքը:

Ինըը Մարքսը «տածում էր գէպի իր կնոջ խելքն ու քննադատական ընդունակութիւնները այնպիսի մի յարգանք, որ,—նա ասել է այդ ինձ 1866.,—ցոյց էր տալիս նրան իր բոլոր ձեռագրները և բարձր գնահատում նրա կարծիքը: Մարքսի կինը արտադրում էր իր ամուսնու ձեռագրները տպագրութեան համար»,—ասում է Լաֆարգը իր յիշողութիւնների մէջ 102), ուր այնքան մեծ զովասանքով է խօսւմ Մարքսի կնոջ մասին:

«Մարքսը—ասում է Լաֆարգը մի այլ տեղ—կապուած էր իր կնոջ հետ ամենախոր զգացմունքով. նրա գեղեցկութիւնը կազմում էր Մարքսի ուրախութիւնն ու հպարտութիւնը. նրա բնաւորութեան փափկութիւնն ու անձնուիրութիւնը զգալապէս մեզմացնում էին Մարքսի ճակատագրի այն հարուածները, որոնք անխուսափելիօրէն շաղկապուած են յեղափոխական սոցիալիստի փոթորկալից կեանքի հետ: Այն տանջանքները, որոնք գերեզման իջեցրին Մարքսի կնոջը, եկան զգալի չափով կրծատելու նաև իրա՞ Մարքսի կեանքը:» 103)

Ընտանեկան հարկի տակ Մարքսը համարեա մի փոքրաւոր էր իր կնոջ իշխող հեղինակութեան առաջ: Նա հասկանում է բարձր էր գնահատում իր կնոջ ընտանեկան խելացի կար-

<sup>102)</sup> Н. Лафаргъ, «Мои воспоминания о Карлѣ Марксе», եր. 22—23.

<sup>103)</sup> Ibid., եր. 29.

պաղբութիւնն ու հմուտ դեկավարութիւնը, ուստի ինքը անվերապահ տեղի էր տալիս նրա տիրական զիրքին:

Մարքու ահսահման սէր տածում էր նաև դէպի իր զաւակները: Առհասարակ շատ լրեխայաւը էր Մարքու: Ժամեր շաբունակ առանց յոդնածութիւն և ձանձրոյթ զգալու կարող էր նա ժամանակ անցկացնել երեխաների շրջանում, խաղալ և խաղացնել նրանց: Մանուկների հասարակութեան մէջ ինքը Մարքու մի նոյնքան անմեղ ու պարզահողի մանուկ է, ինչպէս խոստովանում են նրա կենսագիրները:

Մարքու կրծքի տակ բարախում էր մի սիրա, լի սիրող, քնքաշլիք և ներողամիտ հօր բուռն զգացմունքներով դէպի իր որդիքը, մանաւանդ դէպի իր մեծ զուսարը՝ Ենակն: Փոխանակ հրաժայելու և արգելելու, նա մանկավարժական տակով հասկացրել ու համոզել է իր երեխաներին անելու այն, ինչ կարեոր է և օգտակար, բարի է և ճշմարիտ, և չանելու այն, ինչ անպետք է և վնասակար, չար է և կեղծ: Իր զաւակների հետ նոյն իսկ նա ունեցել է ընկերական յարարելութիւն: Մարքու իր մորթու զոյնի պատճառով ընտանիքում, երեխաներից անուանում էր «Մոհր» (Mohr) — այսինքն սև, սևամորթ — կոչումով:

Եւ Մարքու հայրական գիտու զգացմունքներ տածում էր ոչ միայն դէպի իր հարազաները — որդիքն ու թուները, այլ և առհասարակ դէպի օտար երեխաները, մանաւանդ եթէ վերջիններս անօգնական և թշուառ վիճակի մէջ են գտնուու: Քանի — քանի անգամ է պատահել, ինչպէս Լիրկնեխոն է հաղորդում, որ զբունելու ժամանակ Մարքու յանկարծ անյատացել է իր ընկերակիցների շրջանակից և մօտենալով դէպի այս ու այն տան շէմքում պատառտած լաթերով ծածկուած մանուկը, հայրական գուրգուրանքով շոյել, փայփայել է գլուխը, սև փողը գրել փոքրիկ ափի մէջ և հեռացել: Առհասարակ ֆիզիքական թոյլ կազմուածքը, անօգնական ու ողբալի վիճակը խորապէս շարժում էր Մարքու զութն ու ցաւակցութիւնը:

Որ աստիճան հազուագիւտ առանձնայտկութիւն է, անողոք մարտնչողի երկաթէ կառուցուածքի ներքին խորշում թագնուած գտնել մի այնչափ մեղմ, դիւրազգաց, փափուկ, գթաշարժ սիրտ, մանկական անմեղութիւն:

«Պէտք է Մարքուն իր երեխաների շրջանում տեսնել, որպէսզի կարելի լինի զգացմափար կազմել դիտութեան այդ

հերոսի խարազգացութեան և պարզամտութեան մասին», 104) ասում է Լիրկնեխտը:

Թէ որ աստիճան տարօրինակ ամաչկոտ ու ամօթխած է եղել Մարքսը, ոչ միայն օտար կամ կանոնց հասարակութեան մէջ, այլև իր սովորական ընկերների շրջանում, ասում է դրա մասին Լիրկնեխտը հետեհալը, «Ծիծազելի էր հրբեմն, թէ ինչպէս Մարքսը, որ քաղաքական և տնտեսական վէճերի ժամանակ ամենաուժեղ, նոյն իսկ ցիսիկ արտայայտութիւնների և գարձուածների առաջ չէր խորշում, երեխանների և կանանց ներկայութեամբ այնպիսի քնքաւթեամբ էր արտայայտուում, որի համար մի անգլիական Governess նոյն իսկ կարող էր նրան նախանձել: Եւ հէնց որ խօսուում էր մի փափուկ թեմայի մասին, Մարքսը ընկնում էր ջղային զրդուման մէջ, շփութուած սահում էր աթոսի վրայ այս ու այն կողմ և այնպէս էր կարմրում, ինչպէս մի վեց տարեկան աղջիկ»: 105)

Առասպեկտականի չոփի խոր են եղել Մարքսի զգացմունքները իրրե հայր ու ամուսին: Նրա որդու մահը (ծնուած Փարիզում) ստրափելի կերպով ցնցել էր Մարքսին, մինչ այն աստիճան, որ նրան պիտի բռնած պահէին, որպէսզի թաղելու ըսպէին նիրա չընկնէր փորած գերեզմանի մէջ, որդու զտղաղի վրայ: Նոյնը եղել է իր կնոջ թաղման ժամանակ, եթէ ինպելով չլինէր, այրիացած ծերունին պիտի ինքնամուաց իրեն նետէր սառը հողի գիրկը, դիակնացած կնոջ վրայ:

## Բ.

Մ որքը ուղիւ բնկեր ու հսկաւակուդ.

Լաւագոյն հայր ու ամուսին Մարքսը, ունէր նուև ընկերական սիրտ ու զգացմունք, գաղափարիս լաւաղոյն իմաստով:

Մարքսի ընկերասիրութեան և ընկերական յարարերութիւնների ընոյթը որոշելու ժամանակ, պէտք է միշտ տարբերել՝ Մարքսը որպէս լնկելիս ընկեր և Մարքսը որպէս առնասարակ ընկեր:

Պատմական անցեալը չունի մի ուրիշ օրինակ երկու մարդկանց բարեկամական այն աստիճան ինտիմ յարաբերութեան, ընկերական անձնասէր մտերմութեան ինչպէս կարըլ Մարքսը և Ֆրիդրիխ էնգելսն են ունեցել: Ընկերներ կեանքի բոլոր սահմաններում, ամեն մի դիպուած-

<sup>104)</sup> W. Libknecht, «Karl Marxum Deachtmiss» եր. 63.

<sup>105)</sup> Ibid. եր. 64.

ում։ ՀՅ տարեկանից (Մարքսը) և 23 տարեկանից (Էնդելսը) սկսած նրանք ապրել են միասին, զգացել ու մտածել, ուսումնասիրել ու գրել, գործել ու կռուել են միշտ ձեռք-ձեռքի տուած։ Մարքս և Էնդելս—դա ընկերասիրութեան և բարեկամութեան իգեալի մի կհնդանի իրականացումն է նշանակում։

Ֆր. Էնդելսը դեռ վաղուց ի վեր կազմում էր Մարքսի ընտանիքի հարազատ անդամը. նա Մարքսի alter ego-ն էր. Մարքսի երեխաներից կրում էր նա «Երկրորդ հայր» անունը, ինչպէս հաղորդում է Լաֆարգը։ Մեծ տօն և ուրախութիւն էր լինում Մարքսի ընտանիքի համար ամեն անգամ, երբ Էնդելսը գալիս էր Մանչեստրից Լոնդոն։ Մարքսը խորին անհամբերութեամբ էր սպասում ամեն անգամ իր սիրելի ընկերոջ, և գալստեան օրը նա չէր կարողանում պարապել։

Էնդելսի կարծիքը—նկատում է Լաֆարգը—բարձր էր դասում Մարքսը առաջարարակ բոլորի կարծիքից, որոնց նա ճանաչում էր, որովհետև յանձինս Էնդելսի Մարքսը նկատում էր մի մարդու, որ ընդունակ էր իր ոշխատակիցը լինելու։ Էնդելսը կազմում էր նրա համար ամրող հասարակութիւնը։ Մարքսին ոչ մի աշխատանք չտիպազն չէր թւում Էնդելսին որևէ բանի մէջ համոզելու համար...։ Իսկ Էնդելսին իր կողմ թեքելը կազմում էր Մարքսի համար մի ցնծապին յաղթութիւն։։ «Մարքսը հպարտանում էր Էնդելսով։ Նա խոր ըաւականութամբ էր թւում ինձ, —շարունակում է Լաֆարգը, —իր ընկերոջ մտաւոր ու բարյական յատկութիւնները. նա զնում էր անձամբ Մանչեստր՝ Էնդելսին ինձ ցոյց տալու համար։ Նա յաճախ զարմանում էր Էնդելսի զիտական ծանօթութիւնների բազմակողմանիութեան վրայ և մշտապէս անհանգստանում։։ Շինի Էնդելսի հետ որևէ լան պատահէ։ «Ես միշտ դողում հմ, —ասել է Մարքսը Լաֆարգին, —որ նրա (Էնդելսի) հետ կարող է որևէ դժբաղութիւն պատահել որսի ժամանակ։»<sup>106)</sup>

Հակառակ պատմական-կինոսպական բազմաթիւ դօկումենտների, որոնք վկայում են երկու մտածողների և կոռուպների փոխարք անձնութեան մասին իրենց ընկերական յարաբերութիւնների մէջ, այնուամենայնիւ բութքուական կենսագիրները շարունակում են խարխափել թիւրիմացութիւնների մէջ։ Էնդելսի փոքրաւոր ու յետ կանգնած զիրքը՝ իր աւագ ընկերոջ հանդէպ, առիթ է առել ոմանց գտնելու դրա մէջ Էնդելսի մտաւոր նուաստութեան ապացոյցը Մարքսի հանգէպ։ Դա-

<sup>106)</sup> П. Լաֆարգъ, «Мои воспоминания о Карлѣ Маркесѣ», եր. 25.

արդիւնք է, անշուշտ, փաստի սիալ հասկացողութեան ու բացատրութեան. ինչպէս է լուսաբանում փաստը՝ ամենակոմպեկտենտ աղքիւրը այդ խնդրում, գիտենք նրան:

«Որ ինգելով յետ էր կանգնում Մարքսից և նրա համար զոհում էր իր անձնաւորութիւնը, քանի նա ապրում էր, զտնիշու է և զա փառաւոր գիծն էր կազմում ինգելով բնաւորութեան, սակայն դա ոչ մի կերպ չէ խօսում ինգելով մտաւոր նշանակութեան դիմ: Նա ուրիշ էր, քան Մարքսը, բայց ոչ պակաս արժանաւոր: Երկումն էլ պատկանում էին միմեանց և լրացնում իրար. երկուսից իւրաքանչիւրը լինելով ըստինքեան հաւասարարժէք, կազմում էին նրանք իրենց միացման մէջ մի ուժեղ երկանականորութիւն, որի նմանը չի տալիս պատմութիւնը մի երկրորդ օրինակ»: 107) Վիլհելմ Լիբլնեխառ տարիները շարունակ ապրելով իր ընկեր-ուսուցիչների շրջանում, զիտել է անձամբ նրանց յարաբերութիւնները, ուստի նլա կարծիքը այդ տեսակէտից տւելի ճշգրիտ ու հաւաստի է, քան մի ուրիշինը:

Նոյնը, ինչպէս տեսանք, պնդում է և Լաֆարզը. իսկ մի ուրիշ տեղ նա շեշտում է նոյն իսկ տւելին. «Ինգելով յետ չ' կանդնած (նոտրգիրը մերն է) Մարքսից, — ասում է նա, — այլ կանգնած էր նրա կողքին իր յատուկ մեծութեամբ»: 108)

Իոկ Ֆրանց Մերինգը նկատում է. «Էնգելով Մարքսին հաւասար չէր, այլ համածին ու համանման»: 109)

Այսպէս յանձինս Մարքս-էնգելով, նրանց ընկերական յարաբերութիւնների նկատմամբ, մենք գործ ունինք մի մտաւոր զոյգի հետ, որոնցից իւրաքանչիւրը նոյնըան անկեղծ ու հաւատարիմ էր, որքան և միւսը. մէկը՝ իր տեսակում նոյնքան անհրաժեշտ և արժեքաւոր, որքան միւսը՝ իր տեսակում:

Դեռ շատ աւելի կոպիտ թիւրիմացութիւններ և անհրմն չափազանցութիւններ կան տարածուած Մարքսի առնասարակ ընկեր լինելու և նախանակորդ, թշնամի գառնալու հոգեբանական հակումների մասին:

Չափ ու սահման չճանաչող Փանտազիան ներկայացնում է Մարքսին որպէս մի «նեղուիրա տիրան», որպէս մի «անողոք զիկտատօր», որ միայն հրամայել կարող է իր շրջապատին, իր ընկերներին՝ ընդունել այն, համոզուել այն բանի մէջ,

107) N. Liebknecht, «Karl Marx zum Gedächtniss» եր. 109.

108) R. Lafargue, «Erinnerungen an Fr. Engels» (տես, «Neue Zeit» № 44, 1905)

109) Fr. «Mehring Friedrich Engels» («N. Z.» նոյն համարը)

ինչ ինքն է բնգունելի և համոզեցուցիչ դանում։ ՄԵՆՔ տեսանք դեռ նախկին գլուխներում, թէ ինչպիսի հրեշային դոյներով էին ներկայացնում ինտրիգան Բակունին և իր կողմատկիցները Մարքսի հեղինակութիւնը ինտերնացիօնալի ընդհանուր խորհրդի մէջ—որպէս գիկտատոր, բիսմարկեան ոգու արտայացտիչ» և մի շարք յիմարութիւններ։

Մեհրիկա ապատանած գիրմանական էմիգրանտներից մէկը՝ Բառէք անունով՝ գրում է Լօնգոն, Լիբկնեխտին հետեւել քնորոշ, բայց շատ անմիտ տողերը. «Ի՞նչպէս է ձեր աստուածային պիտութիւնը։ Վերիւմ, զանի վրայ բազմած է ամենագէտը, ամենահմաստունը, ձեր Դալայ-Լամա Մարքսը։ Ապա գալիս է երկար, դատարկ տարածութիւն։ Այնուհետև գալիս է Եսդելսը։ Նորից հետեւմ է երկար դատարկ տարածութիւն։ Ապա գալիս է Վոլֆը։ Կրկին երկար տարածութիւն։ այնուհետև գուցե գալիս է «սհնտիմինտալ է» Լիբկնեխտը» 110)։

Բառէքը ցանկանում էր Լիբկնեխտին Ամերիկա տանել խմբագրի պաշտօնով. Լիբկնեխտը վճռապէս մերժում էր, լաւ իմանալով, որ ինքը մեռած ու կորած կը յայտարարուի եւրոպայի բանուորական շարժման համար, եթէ անցնէ ովկիանոսի միւս կողմը։ Իսկ Բառէքը Լիբկնեխտի ինքնասիրութիւնը խածնելու համար գրում է այդ անիմաստ ու անարժէք տողերը նրա մասին։

Սակայն այն, ինչ ներելի և հասկանալի է նամակում, ֆէլիետօնական մի գրուածքի մէջ, իբրև գրի մի խաղ, մի քանատողական թոփք, նոյնը երբէք ներելի չէ զիտական համարուող որևէ գրուածքի մէջ։ Տուգան-Բարանովսկին ևս նոյն զուարձալի տրտայտութիւններն է դորձածում Մարքսի հասցէին իր «Գիտական» աշխատութեան մէջ։ Նրա բնորոշումով Մարքսը «մի սահմանադրական միապետ չէր իր սեփական թագաւորութեան մէջ, այլ մի միահեծան տէր։ Նրա մտաւոր ղեկավարութիւնը վերածուել էր մի երկաթէ զիկտատորացի, որին պիտի հպատակուէր իւրաքանչիւրը, ով ուզում էր նրա հետ մտաւոր յարաքրութիւն պահպանել»։ «Մարքսի բոլոր պօլեմիկական ընդհարումները—առում է Տուգան-Բարանովսկին մի այլ տեղ—քայլում են անձնական ոխ ու քէնի չափազանց լիտուատութեամբ դէպի հակառակորդը և իր բարոյական տակտի պակասութեամբ արտադրում են ձնչող տպաւորութիւն» (Խօտրգիրը մերն է) 111)։

<sup>110)</sup> N. Liebknecht, Եթի, Կր. 44—50.

<sup>111)</sup> Туганъ—Барановский, «Очерки изъ новѣйшей исторіи политической экономіи и соціализма», Կրըորդ հրատ. Կր. 227 և 228.

Ի՞նչպէս տեսնում էք, Տուգան-Բարանովսկին չի խորհում ամենևին բակունիստ անտրիսիստների տիտղոսներով՝ որակելու Մարքսի խարակութերիստիկան: «Անձնական քէն ու ոխ, զիկտատօր, միահեծան մօնարխ»—սրանը խօսքեր են, որոնք արժէք ունին միայն որպէս բանաստեղծական արտայայտութիւններ, ապա թէ ոչ իրադէս տրամագծօրէն հակասում են նրանք Մարքսի բնոյթագծերին, նրա ընկերական յարաբերութիւնների ամբողջ բովանդակութեան: Անձնական շահերի բինախընդունութեան վերագրել մի մարտնչողի, որ ամրողապէս մարմանացումն է եղել օքեկտիվիզմի և միայն ու միմիայն վերջինիս տեսակէտից է ընդհարուել ու կախում մզել իր բազմաթիւ հակառակորդների դէմ. զիկտատօր ու միահեծան մօնարխ անուանել մի զործիչի, որ այնքան պարզ, հանսարակ, գեմօնկրատիկ և չափազանց ընկերական վերաբերմունք է ունեցել դէպի իր մահերիմներն ու ծանօթները,—որակել մէկին այդպիսի յատկութիւններով, առում ենք, նշանակում է անյատակ մոլորութիւնների մէջ ընկնել: Նրանք բոլորը—ամենից առաջ էնգելսը, Լիբէկնեխտը, Լաֆարզը և այլն,—որոնք ընկերական շատ մօտիկ յարաբերութեան մէջ են եղել Մարքսի հետ, հազորուում են ճիշտ հակառակը այն բանի, ինչ առասպելում են թիւրիմացորէն Մարքսի բուրժուական կենսագիրները:

Լիբէկնեխտը, օրինակ, հազորգում է, որ հակառակ ընդունուած կարծիքի, —որ իրի էնգելսը աւելի «մեղմ» ու «լըսակեաց» էր քան Մարքսը, —Մարքսը խիստ «մատչելի», «ուրախ» և «սիրալիք էր յարաբերութեան մէջ»: «Էնգելսը աւելի սուր ու կոպիտ էր»: Այդ էր պատճառը, որ էնգելսը անհամեմատ շատ էր ընդհարուում անձնական յարաբերութիւնների մէջ, քան Մարքսը, որը միշտ գրաւելու և դէպի ինքը ձգելու մի ազգեցութիւն է ունեցել իր շրջապատի վրայ: Ինը ը Լիբէկնեխտը խոստովանում է, որ յարաբերութիւնների երկար տարիների ընթացքում Մարքսի հետ «միայն երկու անգամ է վէճ ունեցել, իսկ էնգելսի հետ՝ շատ յաճախ»:<sup>112)</sup>

Եւ Տուգան Բարանովսկու երեակայեալ «զիկտատօր ու միահեծան մօնարխ» Մարքսը ոչ միայն սիրով և ընկերաբար տանում էր «իր պետութեան մէջ» իր ծանօթներին, այլ և Լիբէկնեխտի նման փօքրաւորը վլրճել է իր մեծ ուսուցչի հետ շատ կենսական խնդիրների վերաբերեալ և մնացել իր յատուկ կարծիքին, առանց Մարքսից արհամարհուելու կամ նրա «պետութեան» շրջանակից դուրս վանդուելու, ընդհակառակը միշտ

<sup>112)</sup> W. Lielknecht, Հիմ, 4-ր, 1-թ.

մնալով Մարքսի և նրա ընտանեքի, մանաւանդ Մարքսի կնոջ, սիրեցեալ այցելուն, մօտիկ ընկերն ու բարեկամը: Աւրեմն պարզ է, որ Տուգան Բարանովսկին ոչ թէ իրական փառու է հաղորդում իր ընթերցողներին, այլ առավելում է շեղած ու չունեցած յատկութիւններ Մարքսի բնաւորութեան մէջ:

Մարքսը շատ զրական-բաղաքական հակառակորդներ է ունեցիլ, և իրաւ թուով շատ աւելի, քան նրա ընկերներն ու բարեկամներն են եղել: Սկսած Պրուդոնից, Վայտինկից, ձախակողման հեգելեաններից մինչև Խնտերնացիօնալի իր հակառակորդները՝ իւնգը և էկկարիուսը անգամ մէջ առած, Մարքսը իիստ յաճախ է ընդհարուել: Եւ այդ բոլոր դէպքերում մեծ կօմունիստի մէջ հղացած կոռուի ու պայքարի առաջնորդող մօտիմները բդիսել են ոչ թէ աննախան շաներից ու քինախնորութիւնից ինչպէս կսրծում է, այլ իրական գործից, օքինկոտիւ պայմաններից, բանուորական շորժման սոցիալիստական աշխարհականցից: Մարքսը շատ աւելի ճիշտ, հետևողական և լայն հորիզոնով էր ըմբռնում այդ բոլորը, քան քօմանտիկական իիսպահների, սւտոպիական մոլորութիւնների և տակտիկական սպրուտների մէջ խրուած ու գեղերոց նրա բազմաթիւ հակառակորդները, այդ պատճառով չէր կարող զիտական սոցիալիզմի հիմնադիրը սուր ընդհարումներից խուսափել այդ բոլորի հետ: Նրա ոճը խիստ ու անխնայ էր, հարուածները՝ գառն ու թունաւոր, ներգործութիւնը՝ անբուժելի: այն, այդպէս էր Մարքսը կոռուի բոլոր պարագաներում: Եւ այդ ոչ այն պատճառով, անշուշտ, որ նա դիկատոր գառնալու մի մնափառ ախտով վարակուած էր և կամհնում էր իր ես-ին ենթարկել ու հպատակեցնել նրանց որոնք ուզում են նրա հետ գործ ունենալ, այդ բոլորը ոչ թէ տաք տեմպերամենտի անհաշիւ բոնկումներ, բարոյական տակտի բացակայութիւն, —ինչպէս Տ.-Բարանովսկին կտրծում է թիւրիմացօրէն, —պիտանի ոյժերին իրանից իգուր խրանեցնելու նպատակով, այլ այդ բոլորը կատարուում էին բացառապէս յանուն և յօգուտ իրական գործի-բանուորական շարժման, սոցիալիստական պրոպագանդի, տնտեսական-քաղաքական կըսուի: այդ է եղել կոռուի ու պայքարի մօտիւնների բուն աղբիւրը: Մարքսի ուժեղ նատուրան, անսասան կամքը, անյողգողդ էներգիան չէր կարող հանգուրժել ու տանել երբ նկատում էր մէկի թէ միւսի կողմից մի զիտական թէ անդիտաւորեալ շեղում, մի սիզբոնքային զաւաննութիւն, որ կոչուած է վիասելու նրա համար այնքան թանգագին ընդհանուր գործը, վէճ ու հակածառութիւն նա տանում էր սիրով, աշխատելով համոզել էր դիմացինին իր կարծածի ճշութեան մէջ: բայց,

կը կնում ենք, ընդհանուր գործը լիսասելու կոչուած սկզբունքային գաւառանութեան համար, նա մի անհաշտ հակառակորդ էր, անողոք թշնամի, մի յատկութիւն, որ վկայում է միայն Մարքսի առողջ նատուրայի գրական կողմերը:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ խոշոր մոլորութեան ու թիւրիմացութեան արդիւնք է, տեսնել Մարքսի բնաւորութեան մէջ այն, ինչ նա չի ունեցել, և չձանաչիլ այն խոշոր, գրական բնոյթագծերը, ինչ նա է ունեցել: Այդ թիւր հասկացողութեան հիմնական պատճառը կայանում է նրանում, որ Մարքսի կենսագիրներից շատերը խառնում են իրար հետ երկու տարբական իրողութիւններ: Նրանք շփոթում են փաստական ու անխուսափելին՝ արուեստականի հետ:

Անուրանակի փաստ է, ի հարկէ, որ Մարքսը իր գիտական պատրաստութեամբ, ըմբռնողութեան խորութեամբ, քաղաքական հեռատեսութեամբ և տակտիկական հոտառութեամբ, իրքի սոցիալիստ և յիդավոլիստական, անհամեմատ բարձր էր կանգնած իր բոլոր ընկերներից, պաշտօնակիցներից և առհասարակ ժամանակակիցներից: Երա փաստական այդ գերազանցող գիրքը անխուսափելիորէն վերապահնել էր Մարքսին մի անկողսկուլի հեղինակութիւն թէ ընկերական յարաբերութիւնների ընթացքում և թէ պաշտօնական ֆունկցիաների մէջ (ինտերնացիօնակի օրով): Ուրեմն Մարքսի հեղինականոր ձախն ու դիրքը իր ժամանակակիցների շըջանում, —որ Տ.-Բարոնովսկու բանաստեղծական թոխչը «գիտատօր և միահեծան մոնարխ» բառեով է կնքում, —արդիւնք էր ոչ թէ Մարքսի արուեստական ձգտումների և էզօմատական մնափառութեան, ոյլ զա մի օրինակտիւ իրողութիւն էր, երկրի և յարաբերութիւնների բնական ըերմունքով առաջացած մի գրութիւն: Պէտք է երևոյթների նրբութիւնները տարբերել գիտնալ:

Գ.

Մարքս ուղիս հասարակութեան անդամ եւ համաժուրային հայտացի:

Պատմական մի հազուագիւտ տիպի հետ զործ ունենք յանձինս Մարքսի, որպէս հասարական օրգանիզմի անդամ: Հասարակական այնքան ուժեղ ու ցայտուն որակի ինստինկտներով օժտուած անհատ, ինչպէս Կարլ Մարքսն է եղել, կը կնում են, մի բացառակի երևոյթ է պատմական կնանքի բոլոր սօցիալ-քաղաքական հոսանքների գարեշրջաններում:

Իր կեանք մտնելու սկզբնական շրջանից, քսան տարեւ կան հասակից սկսած, իրը բուրժուական արմատական խղէօղով, մինչև իր ծերունագարդ կեանքի վերջին բոպէն, իրը արուտարիստի յեղափոխական բազմափառակ իղիօլով, Մարքսը ունէր մի ընական հակում, մի անգուսով, մի անհղծանելի մղում,—լինել նատարակական դործիչ, դաղպափարիս գերադոյն իմաստով, լինել համաշխարհին բաղաքացի, խօսիս բովանդակալից նշանակութեամբ. կարձաննատական բոլոր ոյժերով և անսպառ էներգիայով նուիրուել ընդհանրութեան, ծառայել մարդկային հասարակութեան դաղպափարին:

«Գիտութիւնը—ասում է Մարքսը—չպէտք է ծառայէ էպօխատական հաճոյքի համար. նա, ում վիճակուել է ամրողջովին գիտութեան նուիրուելու բաղդը, պէտք է պատրաստակամութիւն ունենայ իր զիտելիքներով ծառայելու մարդկութեան»: «Դործել աշխարհի համար»—կըկնել է նա յաճախ: «Ես համաշխարհային բաղաքացի եմ—ասել է նա—և ուր որ էլ ես լինեմ, ամենուրեք ևս աշխատաւոր մշակ եմ»: 113):

Մարքսի ալեկոծ կեանքի ու յաղթանակող գործնէութեան ամբողջ նկարագիրը համոզաւմ է ամեն մէկին, որ նրա այդ կեանքը գտագարկ ֆրազաներ կամ սին ինքնաշատագովովութիւն չեն, այլ իղիալական դործիչի, անմուրաց հերոսի սրաւուղիս վկայութիւն: Կեանքի բոլոր պայմաններում էլ, ուր նետել է նրան գաւու ճակատագիրը՝ իր հայրենիքից Ֆրանսիա, Ֆըրանսիայից Բելգիա, Բելգիայից Անգլիա, Մարքսը անընդհատ շարունակել է իր հասարակական գործնէութիւնը, տեղ գրաւելով ամենուրեք յեղափոխական մարտիկների առաջնակարգ շարքերում:

Մարքսը իր գործնէութեան որակով համաշխարհային բաղաքացի էր հէսց այն պատճառով, որովհետև նրա հասարակական իդէալը չէր պարփակւում ազգային պետութեան շրջանակով, այլ բովանդակում էր իր մէջ միջազգայնութեան ողին: Պրոլետարիատի դասակարգային իդէալը—նրա վախճանական էմանսիպացիան—չէ ճանաչում շրջափակ տերիտորիա ազգային պետութեան, չէ ընդունում աշխարհագրական սահմանափակումներ, ուստի այդ իդէալին նուիրուած Մարքսը գտնում էր իր գործնէութեան մարտական դաշտը ամեն մի քաղաքական միջնավայրում, ուր մղում էին նրան դէպքերն ու եղելութիւնները:

Մարքսի հասարակութիւնը կազմում էր բանուոր գասա-

<sup>113)</sup> II. Լաֆարգ, «Мои воспоминания о Карлѣ Марксѣ», բ. 6 և 7.

կարգի և այդ գասակարգի բոլոր անկեղծ ու հաւատաբիմ բարեկամները: Մարքսը աւելի, քան որևէ մէկը իր ժամանակակից կոմունիստներից, գիտէր խորին հմտութեամբ ու գիտակցութեամբ բաժանել, զատել միմեանցից այսպէս անուանուած՝ երկու աշխարհներ, երկու դասակարգային հասարակութիւններ—բուրժուական և պրօլետարական, տիբապետողների, շահագործողների հասարակութիւն և ենթարկուածների, շահագործուողների հասարակութիւն: Իր ծագումով, իր ցեղական տրագիցեաներով և բաղաքացիական իրաւունքներով, ինչպէս յայտնի է, Մարքսը պատկանում էր առաջին հասարակական կաթիգորիային. իսկ իր սոցիալական իդէալով, քաղաքական գուանանքով, իր բովանդակ գործնէութեան իմաստով Մարքսը մնաց մինչև վերջ ամենաանբաժան, ամենաանկեղծ և ամենահաւատարիմ անդամը երկրորդ հասարակուական գաթեզօրիայի: Լաւպոյն բարեկամ, բան Մարքսն է եղել, զի ունեցիլ նորազոյն դարերի եւրոպական պրօլետարիատը:

Մարքսը չէր ատում բուրժուական հասարակութիւնը, որպէս կոյր ֆանտոմի, և ոչ էլ սիրում էր պրօլետարական հասարակութիւնը, որպէս բօմանտիկ սիրահար. այդպիսի տիպեր կարելի էր միայն ուտոպիստների (Ճ և Վայոլինդ) և անարխիստների (Ճ և Բակունին) մէջ գտնել և ոչ երբէք մարքսիստական կօմունիստների (կարգա՝ սօցիալիստների) մէջ: Մարքսը անհաշտ թշնամի և գիտակցական հակառակորդ էր բուրժուական հասարակութեան, և անբաժան անդամը, խորապէս համոզուած բարեկամը՝ պրօլետարական հասարակութեան: Իսկ այդ թշնամութեան և բարեկամութեան կոնկրետ արտայայտութիւնը եղաւ նրանով, որ Մարքսը ամենայն ճշութեամբ ձգեց գասակարգային կոռու տեսական հիմքը և նրա սկզբունքների համաձայն կազմակերպեց միջազգային պրօլետարիատին (իմա ինտերնացիոնալը), որպէսզի վերջինս «Sturm und Drang»-ի մի յարատե պրօցեսում մարտնչէ բուրժուական ծերացող հասարակութեան դէմք:

Իր արհաւրալից կեանքի բոլոր էջերում Մարքսը մնաց ամենահեակողական կուսակիցը պրօլետարիատի գասակարգային կոռու: Կուսակցականութեան ողին Մարքսի ընաւորութեան ամենապարզացած գիծն էր կազմում. և այդ փայլուն գիծը արտայայտուել է նրա մէջ բանուորական շարժման լուլոր հանգոյցաւոր մօմենտներին,— ամեն անդամ, երբ կօմունիստները կանգնում էին պատմա-քաղաքարական անողոք պրօրի հանդէպ: Տոկուն ու աննահանջ Մարքսը տանուլ չէր տալիս ձա-

իսկ դէպի աջ նշանախեց անգամ. նա անկարող էր կօմպրոմիս-ների քաղաքականութեան մէջ մտնել այն ժամանակ, երբ զբահաշուխն տուժել կարող էր տեսական ու գործնական մարքսիզմը՝ սօցիտլիզմը և բանուորական շարժումը. նա մի ամուռ ու անսասան ժայռ էր այդպիսի բոպէներին. Մեր հին ու մեծ վարդետի հասարակական այդ խարակութիւնական և կուսակցական վճռականութիւնն է, ողին խոր զիտակցութեամբ հետեւում է այսօր ամեն մի ճշմարիտ մարքսիստ, որպէս անհատ-իդէոլոգ և ամեն մի երկրի մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան, որպէս պրոլետարիատի դասակարգային կուսակցութիւն:

Դ.

Մարքսը որպիս լեզուաբան, ուսուցիչ.

Մարքսը խիստ մեծ ընդունակութիւններ է ունեցել լեզուական մէջ. նա ինչպէս կիրկնեխտն է հաղորդում, նրաշախ լեզուաբան է եղել: Նա զիտէր կլասիք լեզուները՝ յունարէն և լատիներէն, նա այնպէս էր զրում անգլիերէն, որպէս անգլիացի, և ֆրանսերէն՝ որպէս ֆրանսիացի, վկայում է կիրկնեխտը: Նրա աշխատակցութիւնը, բազմաթիւ յօդուածները նիւեօրքի «Tribune» թերթում, զրուած էին կլասիք անգլիերէն, իսկ նրա «Փիլիսոփայութեան թշուառութիւն» զիրքը զրուած էր կլասիք ֆրանսերէն: Մարքսը զիտէր գերմաներէն, որպէս մի հմուտ ֆիլոլոգ, նա թափանցել էր գերմանական փարթամ ու փիլիսոփայական լեզուի խորքը և ոչ միայն զիտէր զործածել իր ժուրնալիստական և գիտական աշխատութիւնների մէջ այդ լեզուի բոլոր հարստութիւնը, նուրբ դարձուածները և ճկուն ոճը, այլև լեզուաբարական հմտութեամբ հասկանում էր լեզուի կօնստրուկցիան, նրա դարերի օրգանական բարդացումը: Մարքսը լաւ իմալով լեզուի ծագումն ու էութիւնը, առանց դժուարութեան կարողանում էր նորանոր լեզուներ սովորել: Լաֆարգի վկայութեամբ Մարքսը կարդում էր երոպական բոլոր լեզուներով, ամեն մի կլասիք գրողի երկ կարդում էր բնագրի վրայ. «օտար լեզուն մի աւելորդ դէնք է կեանքի կուռում—յաճախ կըկնել է նա: Եւ այդ «աւելորդ դէնք» ձեռք բերելու համար նա չխնայեց իր ժամերը մօտ 50 տարեկան հստակում սովորելու նոյն իսկ ուսական լեզուն, եւրոպացիների համար տակաւին անմատչելի և դժուար լեզուն: Մարքսի ձեռքն էին ընկնում ուսւերէն շատ զալտնի զօկումհնաներ, որոնց կարդալ ու հասկանալ էր ուզում Մարք-

աը բնագրի վրայ: Դրիմի պատերազմի ժամանակ Մարքսը անգամ արարեցէն և թիւրքերէն սովորելու դիտաւորութիւն ունէր, ասել է արևելագէտ լեզուարանների մի մասնագիտական ձգտում, որ պիտի ի զուր սպառէր անյագ լեզուագէտ Մարքսի ոյժերն ու ժամերը, եթէ նա կատարել ցանկանար իր դիտաւորութիւնը:

Մարքսի կենսագիրները, յատկապէս Վ. Լիբկնեխտը, վկայում են, որ Մարքսը ունեցել է ուսուցանելու փայլուն տաղանդ: Նա, որի ոճը «անհասկանալի» դարձուածքները «խթին ու վերացական» են հոչակուած շատ քըննադատների կողմից, նա գիտէր իրեն փառաւոր կերպով մատչելի դարձնել անգամ միջակ, անպատճառ ունկընդին: Դեռ 40-ական թուականներին Մարքսը Բրիւսելում առիթ է ունեցել դասախոսելու տեղական գերմանական բանուորների ժողովներում: «Դարձու աշխատանք և կազմիտալ» բրօշիւրը (կազմուած այն ժամանակուայ դասախոսութիւնից) պարզ գաղափար է տալիս ամեն մի ընթերցողին, թէ ինչպէս «կազմիտալ» հեղինակը կարողանում էր պարզ հասարակ, դիւրըմբանելի արտայայտութիւններով մատչելի լինել նաև բանուորական առեդիտօրիային: Լօնդոնում, 1850—51 թ. Մարքսը հիմնում է տնտեսագիտական դասախոսութիւնների կուրսեր «կոմունիստական բանուորական-կրթական խմբի» համար: Լիբկնեխտը մեծ հիացմաւնքով է խօսում այդ դասախոսութիւնների մասին, թէ ինչպէս Մարքսը պարզ, պատուիկը արտայայտելու ընդունակութեամբ հանդերձ, ունէր փորձուած ուսուցի մանկավարժական տակու ու հմտութիւն, հասակաւորներին սովորեցնելու դպրոցական սիստեմ ու մեթոդ:

Մասնաւոր ուսուցման ժամանակ Մարքսը շատ խստապահանջ «վարժապետ» է եղել: Լիբկնեխտը խորին երախտագիտութեամբ է յիշում, որ Մարքսը իր հարազատ ուսուցիչն է եղել, ուսուցիչ բոլոր սահմաններում և բոլոր՝ ճիւղերի մէջ: Որպէս վոքքրիկ պատանու, Մարքսը դաս է տուել նրան քաղաքատնտեսութիւնից, պատմութիւնից, լեզուներից և այլն, և ուսուցչի բոլոր հոգատարութեամբ դաս պահանջել նրանից, իմստ ըննութեան ևնթարկել նրան: «Սովորել, սովորել», դա Մարքսի «կաթեգորիական իմպերատիւն» էր, որ յաճախ ուղղում էր «ջահնելներին», մղելով նրանց դէպի Բրիտանական հարուստ թանգարանի փառահեղ ընթերցարանը:

Ի զուր չէ նա ներքին գոհունակութեամբ և գիտակցութեամբ ասել. «Ես պէտք է մարդիկ պատրաստեմ, որոնք շա-

բունակին ինձնից յետոյ կօմունիսուական պրօլավանդայիր գործը»: 114)

Մեծ կօմունիսուլ, ինչպէս ակսնում ենք, խորապէս զիտակից էր նաև իր անհատական-ուսուցանողական միսիային: Նա ոչ միսյն ուսուցիչ եղաւ բազմաթիւ աշակերտների և հետևողների համար իր գիտական սիստեմի, քաղաքատնտեսական փիլիսոփայական շկոլայի մէջ, այլև եղաւ ուսուցիչ՝ իր շրջանակից ընկերների և աշոկերտների համար, զուտ բառացի իմաստով:

b.

Մարքսը որպէս լեբեցող եւ գրոլ.

Կարլ Մարքսը ունեցել է արտաստվոր բնոյթապծեր նաև որպէս ընթերցող ու գրոլ: Առասպելական աշխատակցութիւնը, հանձարեղ ընդունակութիւնը, սուր յիշողութիւնը, զիւրըմբոնոզ միտքը, բազմակողմանի հետաքրքրութիւնը—ըոլորը միասին ամփոփուած տոկուն ու յամառ աշխատանքի ընդունակ մի խիստ ամուր ու առողջ օրգանիզմի մէջ. այնուհետև այնքան փարթամ, տնտեսապէս և ընդհանուր-կուլտուրապէս այն աստիճան զարգացած ու յառաջադէմ միջնավայրում, ինչպէս Անգլիան է,—այդ ըոլորի ընդհանուր յայտարարը պէտք է, ընականօրէն, մտածող-զրող Մարքսին դարձնէր այն, ինչ նա իրապէս դարձաւ:

Մենք ասացինք, որ Մարքսը առասպելական աշխատափութիւն է ունեցել: Նրա աշխատանքի ժամերին ականատես լիբեկնեխաը ուղղակի խօսք չի գտնում պարզ գաղափար տալու համար ընթերցողին աշխատանքի ժամերի քանակի և որակի (խորութեան) մասին, որ Մարքսն է ունեցել կոնդոնում: Դա մի աննման, չտեսնուած աշխատասիրութիւն է եղել, որին Փիզիքական օրգանների նոյն խոկ երկաթէ կոնստրուկցիան հալ ու մաշ կինի: Յոդնածութիւն ասածդ զոյութիւն չունէր օր ու գիշեր աշխատող—կարգացող ու զրող—Մարքսի համար: Յիշեկուայ ընդհատուած ժամերը՝ բազմաթիւ այցելութիւններով (իրա մօտ), ժողովներով, թէ զրօսանքով, նա լի ու լի լրացնում էր գիշերները. նա ամբողջ գիշերը, մինչև լոյս առաւօտ, աշխատում էր: Գիշերուայ ժամերը հանգիստ են, անշուշտ, ուստի Մարքսը իր ծանր աշխատանքները կատարում էր գիշերները: Մակայն գիշերուայ ժամերը, միաժամանակ, բայցա-

<sup>114)</sup> Պ. Լաֆարգ, Եվի, Եր. 5.

յիշ են, հակասողվազական։ այդ հանգամանքը թէև դիտէր լիրքսը, բայց չէր մտածում գրա մասին ու զսպում իրեն, այնքան կլանուել ու տարուել էր իր ընթերցանութեամբ և գրութեամբ։ Սակայն այդ հանգամանքը շատ լաւ զգում էր ինքը Եննին, նրա խելացի կինը, որի խրատն ու յորդորները, այդ խնդրում (զիշերը չզբաղուելու համար), անհետևանք էին անցնում Մարքսի համար։ Այն աստիճան չափազանցութեան հասցըեց Մարքսը իր գիշերուայ աշխատանքը, որ 50-ական թուականների վերջերին սկսուեց քայլայումների և խանգարումների ենթարկուել նրա այնքան առողջ ֆիզիքականը։ Բը-ժշկի կաթեկորիկ պահանջով առժամանակ կրծատուեցին գիշերուայ աշխատանքի սպասիչ ժամերը, որոնց փոխարէն, սակայն, Մարքսը աշխատում էր ցերեկները։ Եւ գուցէ չափազանցութիւն և յախուռն մի վճիռ չէ, երբ Լիբկնիխտը շեշտում է, որ եթէ Մարքսը «առողջապահութիւն համապատասխոն կեանք վարէր, կապրէր մինչեւ օրս», այսինքն մինչեւ 1896 թուականը, ինգելսի մահուանից մի տարի յետոյ, երբ նա զրի է անցրել այդ խօսքերը։

«Եթէ մարդկանց արժէքը—շեշտում է Լիբկնիխտը իրաւամբ—չափուէր ըստ նրանց ցոյց տուած աշխատանքի, —ինչպէս երկրի արժէքը չափում է ըստ նրանց մէջ մարմացած աշխատանքի, —այն ժամանակ՝ հէնց այդ տեսակէտից նայելով, Մարքսը այնքան բարձր արժէք ունի, որ հոգեկան հսկաների մէջ միայն քչերը կարող են նրան հաւասարուել»։ Եւ ինչ հատուցում է տուել բիոգիրական հասարակութիւնը աշխատանքի այդ վիթխարի գումարի համար։ «Կապիտալի» վրայ—շարունակում է Լիբկնիխտը—աշխատել է Մարքսը ամբողջ քառասուն տարի։ և ինչպէս է աշխատել. ինչպէս միայն մի Մարքս աշխատել կարող է։ Եւ ես չեմ չափազանցում, եթէ ասեմ, որ ամենավատ վճարուող օրավարձ բանուորը Գերմանիայում, քառասուն տարուայ ընթացքում աւելի շատ վարձ է ստացել, քան Մարքսն է «հօնօրաբար» ստացել այս դարու երկու ամենամեծ գիտական ստեղծագործութիւններից մէկի համար։ Միւսը (գիտու ստեղծ.) կազմում են Դարվինի երկերը»։ 15)

Այդպիսի վկայութիւններ է տալիս մեզ ամենակօմպետենտ կենսագիրներից մէկը Մարքսի աշխատասիրութեան, աշխատանքի ոյժի և աշխատանքի մասին։

Ինքը Մարքսը զեռ աւելի ցածր վարձատրութիւն, նիւթական հետևանքներ է սպասել «Կապիտալի» համար։ «Կապիտա-

<sup>115)</sup> N. Liebknecht, Ibid, եր. 55.

լը»—ասել է նա Լաֆարգին—«հազիւ տայ ինձ այն, ինչ արժել են ինձ վրայ այն սիզարները, որոնց ծխել եմ ևս այն գրելու ժամանակամիջոցում»:<sup>116)</sup>

Եւ իրաւ, Մարքսը մի վերին աստիճանին կլքու, արագ ու շատ ծխող է եղել իր աշխատանքի բոպէներին: Անզիւական սիզարը ուժեղ ու թանգ էր նրա համար, այդ պատճառով նա ստիպուած էր էժանագին, վաս սիզարից ծիել:

Մարքսի մշտական ընկերները, անբաժան, որոնց հետ նա գործ էր ունենում օր ու գիշեր, կազմում էին նրա ընթերցանութեան, ուսումնասիրութեան և խորազնին հետազոտութեան թանգագին պարագաները—իր հազարաւոր հատորներից բաղկացած զրագարնը, իր դրին ու դրասեղանը: «Նրանք իմ սարուկներն են և պէտք ծառայեն ինձ իմ ցանկութեան համաձայն», աւել է Մարքսը իր գրքերի նկատմամբ: Եւ նա, իսկապէս, վարւում էր իր գրքերի հետ, որպէս ստրուկների: Մարքսը թափթփուկ բնաւորութիւն է ունեցել. նա արգելում էր կարգի բերելու իր գրքերն ու գրելու միւս պարագաները, որպէս զի շխանգարութ այն «կարգը», որ առաջ է եկել իր պարապելու բոպէներին և որին նա այն աստիճան էր ընտելացել, որ բոպէտպէս կարող էր իմանալ ու հանել տեղից այն գիրը՝ կարգալու համար, և այն տեսրը՝ գրելու համար, որոնց ինքն էր ուղում: Նա չէր խնայում իր «ստրուկների» արտաքինը, թուղթը. կարգալու ժամանակ զանազան նկատողութիւններ և նշաններ էր անում՝ գրքերի լուսանցքներում:

Դամբ ու յոկնացուցիչ աշխատանքներից յետոյ Մարքսը սովորաբար կարգում էր պօզիտիվ և քօմաններ. նա ունէր իր առանձնապէս սիրեցեալ հեղինակները, որոնց երկերը կարգում էր նա օրիգինալի վրայ: Լաֆարգը հազորդում է, որ Մարքսը Հայնէի և Գիօթէի երկերը անգիր գիտէր և յաճախ ցիտատներ է բերում նրանցից խօսակցութեան ժամանակ. Էսխիլիսնին և Շեքսպիրին համարում էր Մարքսը աշխարհի ամենամեծ դրամատուրգները: Շատ սիրում էր նաև Դանտէին: Մարքսի սիրեցած ու գոված քօմանները կազմում էին Ալէքսանդր Դիւմայի (հայր) Վալտեր Սկոտի, Սերվանտեսի և մանաւանդ Բալզակի երկերը և այլն: Ռուս հեղինակներից կարողում է Պուշկին, Գոգով, Շչեդրին բնագրի վրայ:

Միւս կարգի «թեթև» զրագմունքը, որի մէջ Մարքսը նանկատութիւն և անդորրութիւն էր գտնում իր ժամանագիտական ժանր աշխատանքներից յետոյ, կազմում էր մաթեմատիկան, և իւ-

<sup>116)</sup> II. Լաֆարգ, Տիգ, եր, 8.

բաւ բարձր մաթեմատիկան։ Մարքսը խիստ սիրում էր ալգեբրան և յոդհած բռակէներին ամենաբարձր ու բարդ խնդիրները լուծելու հաճոյք էր ունենում։ Եւ մի այնպիսի պահպանողական գիտնական, ինչպէս պրօֆեսոր Շմոլին է (Բերլինի համալսարանում), պարզ խոստովանում է, որ իթէ Մարքսը մասնագիտաբար զբաղուէր մաթեմատիկայով, յանձինս նրան կունենայինք ամենահանճարեղ մաթեմատիկոսներից մէկը։ Լափարզը պատմում է իր յիշողութիւնների մէջ, թէ ինչպէս Մարքսը իր կնոջ հիւանդութեան ամենադան ու կոկծալից բռակէներին իր հոգեկան միսիթարութիւնը գտնում էր մաթեմատիկական, ամենակնճռուտ պրոբլեմների մէջ։ Նա զրել է մաթեմատիկոսներից բարձր գնահատուած մի աշխատութիւն, որ երեկի կը հրատարակուի Մարքսի բոլոր երկերի ժողովածուն լոյս ընծայելու ժումանակի։ Այսուհետեւ աւելացնում է Լափարզը, որ Մարքսը զտել է բարձր մաթեմատիկայի մէջ զիարեկ—տիկական շարժումը՝ իր ամենահաստրակ և առաւել հետեղական ձեւ։

Ընթերցանութեան և պարապմունքի երրորդ ճիւղը (իր իսկական մասնագիտութիւնից գուրս), որ առանձնապէս զրաւել է Մարքսի ուշագրութիւնը, եղել է բնագիտութիւնը, և Մարքսը եղել է ասածիններից մէկը, որ այնքան բարձր դնահատել է Դարվինի հետազօտութիւնների արժեքը, նկատում է Լիբկընիստը, Դարվինի «Տեսակների ծագումը» զարմանալի գուգագիպութեամբ լոյս է տեսել այն թուականին (1859 թ.), երբ հրատարակուել է Մարքսի «Թաղաքատնութեան քննադատութիւնը»։ Լիբկէնիսիտը աւելացնում է, որ նշանաւոր ընագէտների անունները նոյնքան յաճախ էին յիշում իրենց շըրջանում, որքան Ալամ Սմիտ, Ռիկարդո կլասիք տնտեսագէտների անունները։ իսկ Դարվինի անունը և նրա գիտական նուաճումները ամիսներ շարունակ խօսակցութեան նիւթ էին կազմում Մարքսի լնկերական շըրջանում։

Մարքսը ունեցել է զրապիտի օրինակելի բարեխղնութիւն։ Նրա գրագիտական ճշմարտասիրութեան սկզբունքը թելադրել է նրան արժանաւորապէս գնահատել և տեղ տալ իր կօլոսալ երկերի մէջ ամեն մի գրողի ու հեղինակի առաջին անդամ արտայայտած այս կամ այն միտքն ու կարծիքը որևէ է նիւթի մասին, որքան էլ հեղինակը կամ աղբլուրը անյայտ ու աննշան լինէր։ Երկրորդ ձեռքից օգտուելու սովորութիւն չունէր նա բոլորովին, այլ միշտ զիմում էր սկզբնական աղբիւրին, նկատում է Լափարզը, ամենանշին Փակտի վաւերացման համար, Մարքսը պատրաստ էր հատորներ բըքըելու։ Կարճ,

Մարքսը ունիցել է գրագիտական մի դուելի պեղանտիզմ, մանրակրկոտութիւն։ Օչինակ լաֆարզը հաղորդում է, որ Մարքսը իր «Կապիտալ»-ի մէջ քսան երես աշխատանքի օրէնսդրական ապահովութիւն (Անգլիայում) մասին դրելու համար, կարգացել է «կապոյտ գրքեր» ամբողջ գրադարանը, որ պարունակում էր Անգլիայի և Շոտլանդիայի գործարանական վերատեսուչների և յանձնաժողովների հաշուէտուութիւնը։ Այդ գոկումնաներին խիստ միծ արժէք էր տալիս Մարքսը, իսկ նրանց հայթհայթող պաշտօնական ներկայացուցիչներին նա գովում էր հիացմունքով, կասկածելով որ հազիւ ևրոպական որևէ այլ ժողովրդի մէջ լինէին «այնպիսի տեղեակ, անկուսակցական և անաշտո մարդիկ, ինչպէս Անգլիայի գործարանական վերատեսուչներն են»։

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ Մարքսը ինչպէս իր մամնաւոր-անհատական կեանքի միւս կողմերում, այնպէս էլ իր գրականական գործնէութեան (ընթերցանութեան և արտադրութեան/ ստհմանուժ ունեցել է խոշոր դժեր, օրինակելի հակումներ ու սովորութիւններ։

Մարքսի ամբողջ խարակտերիստիկան միզ ցոյց տուաւ, որ իրաւ նա մարմնացումն է կազմում հատընտիր առանձնայատեկութիւնների, խոշոր, արտասովոր բնոյթագծերի,—կարճ միշտին կարգի տիպի կամ միջակ մարդու համար կարելիութեան սահմաններից դուրս մի շարք «տարօրինակութիւններ»։ Ի հարկէ մենք խուսափեցինք մանրամամնութիւններից—Մարքսի անհատական կեանքի շատ ու շատ էպիզոդներից և արկածներից։ Կարենոր էր մեզ համար Մարքսի անհատական կեանքի, հակումների ու սովորութիւնների միայն էական ու հիմնական փաստերի նկարագիրը և իրաւ այն չափով, որ չափով դա անհրաժեշտ էր ներկայացնելու միծ մտածող-գործողի նաեւ մարդկային միծ բնաւորութիւնը։

Բ. Դշիսանեան

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑ

9.

Պասիարակութեան նարցը  
եւ

Լոգերու ժողովը

Մեր առաջին նամակում, խօսելով Անգլիայ բանուորական դասի վերջին քառորդ դարու ընդուած շարժման և խիզախ յառաջխաղացման վրայ, խոստացանք, այդ նամակներու շարքին՝ պարբերաբար անդրադառնալ Անգլիական ընկերական ու քաղաքական կեանքի գանազան խաւերուն վրայ:

Արդի Անգլիական կարգերը բարեփոխելու ձգոում մը չէ մեր կողմէն, ինչպէս մի քանի չարամիաները սովոր են թարգմանել՝ ամին անկամ որ տեսնեն թէ հայ մը ինքնարերաբեր կը ջանայ օտար բարերն ու կարգերը մօտ հաղորդակցութեան մէջ զնել հայ մտքերու հետ և գաղափար մը տալ դուրսի կեանքին վրայ—թէպէտի «անհայկական»:

Ու ճիշտ այդ նպատակով է որ այս պատեհութեամբ կուզեմ պատկերացնել բնթերցողին Անգլիոյ կարգերու ժողովին խսկութիւնը, — ժողովը մը, որ ոչ մէկ սահմանագրական երեկի համանմանը ունի՞ հակառակ իր առաւել անձուկ կարգերուն: Խնդիրը, շատ մեղմօրէն յայտարարուած ըլլալով պարզամինտական ք. նիստի բացման զահաճառին մէջ, պիտի երեւան զայ շուտով, թերևս մինչէ այս տողերուս հրատարակումը և կարելի է, առանց չափազանցութեան նախագուշակել, որ աեղի պիտի տայ խիստ խանդագառ ու հրատապ վէճերու, լինելով զոյտութեան պայքար մը բոլոր կուսակցութիւններուն համար ալ, անշուշտ իրենց մասնայատուկ տեսակէտներով:

Իրեւ ամբողջացուցիչ պարագայ մը, աւելի լայնօրէն ընդգծելու համար լորդերու նետօ-ին ոյժը, հոս պիտի շօշափեմ նոյնպէս անցիալ նիստին մէջ յառաջ ըմբուած Դաստիարակու-

թեսն Օրինագիծը, որ Ազատական Դահլիճին լաւուգոյն ու մեծագոյն գործերէն մէկը պիտի նկատուէր, բայց թէ, շնորհիւ լօրդերու վարմունքին, գաստապարառուեցաւ ոչնչութեան։ Այսօր թէպէտե անցեալի գէպք մը լոկ, կարժէ որ ճանչցուի խնդիրը, որով զուրսիններ առիթ կ'ունինան գաղափար մը կազմելու Անզիոյ դաստիարակչական կարգերուն վրայ ևա-

\*

1905 գեկտեմբերին, երբ տեղի ունեցաւ Անգլիոյ Բնադրանուր Ընտրութիւնը, ազատականներ, բրիտանական վերջին կէս դարու պարբաննառական պատմութեան մէջ չը տեսնուած ջախշախիչ մհծամասնութիւնով մը՝ գրուեցան պաշտօնին

Ազատականութեան այս հսկայ յաղթանակը, մէկ կողմ ձգելով բազմաթիւ կէտեր, վերագրելի էր երկու մհծ ու կարեւորագոյն հարցերու մասնաւորապէս—Առաջին՝ Հար. Աֆրիկէ, Տրանսվալի սակենանքերուն մէջ շահագործուող չինացի կուլիներուն, որոնք ապականութեան աղբեկրներ կը դառնային իրենց արևելիսն պժկալի ունակութիւններով, և որու վերացման համար որևէ քայլ առած չէր նախորդ կառավարութիւնը, այլ ընդհակառակը, Տէրունական Եկեղեցին պետը նկատած էր անոց ներկայութիւնը «ցաւալի անհրաժեշտութիւն» մը, լոկ հանքատէրերու քմահաճոյքին համար։ Մինչ երկրորդ և զիսաւորը, գաստիարակութեան իմպիրն, ունիցաւ չափազանց անհաւասար ու կողմանակալ բնոյթ մը՝ շնորհիւ Բէլֆորի ներմուծած 1902 թուականի Օրինագիծին

Այսպէս, երբ Նոր Պարլամենտը բացաւ իր նախանիսար եղուարդ VII-ի գահածառով, ազատական զահլիճի առաջին գործը եղաւ վերոյիշեալ ինդրոց շօշափումը։ Նախորդը, թէպէտե հետու լուրզովին լուծուած ըլլալէ, այսօր կը վայելէ ինքնավար սահմանադրութիւն զօրագար Բօթայի նախարարապետութեան ներքեւ, և շուտով մաքրագործուելու յոյսեր կան։ Բայց զա դուրս է մեր ներկայ նիւթէն։ Մինչ այս անդամ պիտի ծանրանանք գաստիարակչական հարցին վրայ և ցոյց տանք թէ ինչպիսի հիմքերու վրայ դրուած է ժողովրդի մանուկներու գաստիարակութիւնը ազատ ու սահմանադրական Անգլիոյ մէջ։ Իսկ ասոր համար հարկ է փոքր բացատրութիւն մը տալ երկրի կրօնական բաժմանց մասին, ցուցնելով միանգամայն իրենց ներգործումը ժողովրդի քաղաքացիական կիանքին վրայ։

Մէկդի ձգելով անթիւ ու անհամար ստորաբաժանումնե-

ըլ, Անգլիոյ կրօնականութիւնը կարելի է բաժանել երկու ընդհանուր հաստուածներու.—Ա. Անգլիկան կամ Տէրունական Եկեղեցին (State Church), որոնք կը կոչուին նաև եպիսկոպոսականներ և մասնաւոր կրօնավիտութիւն մը ունինին Բ. Հականովիկան կամ Ազատ Եկեղեցին (Free Church): Առաջինը, որ գրեթէ պահպանողական դասէն է բազկացած առաւելաբար, միշտ նկատվուկ մը համդիսացած է անոր և կը պահուի ի հաշիւ Տէրութեան, մինչ երկրորդը, գրեթէ ազատականներու լէգէօն մը, անկախ է ու իր շրջանը կը հողայ զինքը: (Հոռվմէական կամուլիկներ շատ տչքառու զիրք մը չեն դրաւեր՝ բացի Իրլանդայէ):

Լօրդերու ժողովը, որի վերջնական վաւերացումէն կախուած է պարլամենտի մէջ անցուած բոլոր ծրագիրներու գործադրումը, մեծամասնարար կը բաղկանայ հոգեուրական լորդերէ—եպիսկոպոսներէ—ու չնայելով որ արդէն ամրողութեամբ պահպանողական ժողով մըն է այդ, զրեթէ չկայ մէկ ներկայացուցիչ հոն՝ Հականովիկան Եկեղեցին պատկանող Այսպէս, ունինալով ձեռքի մէջ օրէնսդրական բանալին, ամէն հարց շօշափուած է համաձայն իրենց շահերուն, մերժելով միշտ այսպիսի ծրագիրներ՝ որոնք կարգ մը կէտեր դուրս բերելով ավ մը եպիսկոպոսներու մագիստրէն, կը զնէին հասարակութեան հակողութեան ներքի, հոգ չէ թէ ինչպիսի ջախջախիչ մեծամասնութիւն վայելէին աղոնք Վարի կամ Հասարակութովին մէջ (House of Commons), ժողովրդի իսկական ներկայացուցչութիւնը: Աշխարհական լօրդեր, որոնց շոհելուն կը նապատէ միշտ կրօնական կօնտրօլը, աջակից և կոյր գործիք մը եղած են ստէպ հոգեուրական լօրդերուն ձեռքը, խոչընդոտ համբխանալով կրօնական լայն ազատութեան, ինչ որ անհնար էր ձեռք բերել՝ երբ մէկ շահամոլ ու իշխելու անզուսով փափաք ունեցող աղանդի մը տրամադրութեան տակ զրուած էր այսքան աներևակայելի ոյժ:

Թէ Լօրդերու ժողովը ինչպիսի հաւաքում մըն է, կարելի է հղուակացնել հետեւելին, ուր հզօր շեշտով կը նշմարուի կրօնական մէկ մասնաւոր հաստուածի մը (տէրունական եկեղեցոյ) մատը:

—1821-ին երևան բերուեցաւ կաթոլիկներ Պարլամէնտ ընդունելու օրինագիծը և, անցնելով ժողովրդի ներկայացուցչուներէն, յանձնուեցաւ լօրդերուն: Հոն մերժուեցաւ 25 քուէով ընդդէմ 2 ի: Հրեաներ Պարլամէնտ ընդունուելու ինդիքը յառաջ եկաւ 1833-ին և ութ անգամ մերժում ստուցաւ Լորդերու ժողովին, տեղի տալով 1858-ին միայն Եկեղեցական

տուրքը որ ժողովուրդը պարտաւորուած էր վճարել տէրունուկան եկեղեցւոյն անխոտիր աղանդի, — շատ հոյակագործն սարքուած հոգևորական լորդերէ կամ եպիսկոպոսներէ, — առաւել քան 11 տարի տեսեց մինչև վերացումը (1858—1869): Գերեզմաններն իսկ եպիսկոպոսներու ձեռքը մինաշնորհ էին դարձած ու կը մերժէին ուրիշ աղանդական լնդունիւ: Եօթը տարուան անհաւասար պայքար մը միայն յաջողեցաւ վատրել այդ անամօթ սիստեմը:

Ունենալով այսքան անկուշա տեսչ մը իրենց մասնաւոր աղանդը՝ յառաջ մղելու տյապիսի մանը խնդրոց մէջ որքան աւելի բծախնդիր ըլլալու էին եկեղեցականներ գաստիարակութեան հարցին՝ ուր դիր կը խազայ ամենէ պարարտ հողը եսական շահերու տարածման՝ մանուկներն ու պատանիները: Ու ատի արտայայտած են Անգլիոյ հոգևորական ու աշխարհական լորդերը՝ զզուելիութեան համնող չափով մը, և իրենց սեփական կրօնադիտական սկզբունքներով մանուկներու մատղաշ մտքերը խմորելու թափին մէջ՝ բոլորովին անտեսած իրական դաստիարակութեան պահանջները: Տէրութիւնը պարտաւոր էր վճարել նախակրթական զպրոցները պէտք էր գտնուէին եպիսկոպոսականներու բացարձակ գերիշխանութեան ներքի: Միւնոյն գերիշխանութեան ներքի կը գտնուին այսօր նաև երկրորդական բարձրագոյն վարժարանները: Նոյն համալսարաններէ իսկ վտարուած էին Հականգլիկան (Nonconformist) և այլ հերձուածական հատուածներ Տէրունական եկեղեցին՝ մինչև 36 տարուայ յամառ կոիւ մը խափանեց այդ ապօքէնութիւնը (1834—1871):

Այս բոլորը կու գան միանգամայն վաւերացնել թէ՝ կրօնքը ինչպէս մշտական պատոնէշ մը, ատելութեան և թշնամանքի յաւիտենական կուռածաղիկ մըն է հանդիսացած՝ նոյն ինք իր մէջ, իր «ազատ» ու «անկաշկանդ» վերջին անունին տակ՝ այդ ևս ամենէ լուսաւոր կեղլուն մը, իր եսական շահամոլ վէճերուն զոհելով միիօնաւորներու իսկական պէտքերը, անոնց յառաջադիմութեան անհրաժեշտ պայմանները:

\*

Ի՞նչ է, սակայն, այդ հոգևորական թէ աշխարհական Լորդութեան մշտական պատոնէշ մը, ատելութեան և թշնամանքի յաւիտենական կուռածաղիկ մըն է հանդիսացած՝ նոյն ինք իր մէջ, իր «ազատ» ու «անկաշկանդ» վերջին անունին տակ՝ այդ ևս ամենէ լուսաւոր կեղլուն մը, իր եսական շահամոլ վէճերուն զոհելով միիօնաւորներու իսկական պէտքերը, անոնց յառաջադիմութեան անհրաժեշտ պայմանները:

Զեմբը էն, իր ծայրայեղ արմատական համոզումներ փայտայած օրերուն, երբ գեռ Գլադիուսի մօտ կը նստէր ու անոր

լայն ու ուամկալար սկզբունքները կը ճառէր, սատէս բնորոշած է Լորդերու ժողովը, որուն անհաշտ թշնամի մըն էր նաև ինքը Գլազուոն: — «Անողատառխանաւառու առանց անկտիսութեան, յամառ առանց արիութեան, միանձնեան առանց դիտողութեան ու գոռող առանց զիտութեան»: Եւ յիրտւի...

Անգլիական սահմանադրութիւնը, իթէ ունի արաւաներ, առոնց մեծագոյնն է Լորդերու ժողովի գոյութիւնը՝ գեթ իր ներկայ վիճակին մէջ, որ ինքնակոչ է մեծամասնարար, ոչ ժողովրդէն ընտրուած և ոչ ալ ժողովրդի ներկայացուցիչներէն՝ ինչպէս Թրանսայի, Միացիալ Նահանգաց, Պէլճիկայի, Տանիմարգայի, Հոլանտայի և այլոց Բարձրտղոյն կամ Ծերակուտական ժողովը: Բազկացած է ոս առհասարակ հոգատէրերէ (landlord) և ժառանգական է: Խւրաքանչիւր լորդի զաւակ իրաւունք ունի հոն բազմել ու քուէ տալ համաձայն իր քմահաճոյքին կամ իր լիդըրին գրդան: Անոնցմէ ոմանք տարին անգամ մը հազիւ ուրք կը գնիւն հոն, այսուհանդերձ, քուէ տալու ժամանակ կարող են տալ:

Հսկնք թէ գլխաւորաբար պահպանողական են անոնք. հետևաբար, ինչ ծրագիր որ հաւանութիւն զտնէ ժողովրդի ազատական, կամ արմատական և կամ բանուոր ներկայացուցիչներէն, հոն կարելի է մերժման հանդիպել: Այս պարագան, սակայն հեռու է պահպանողական խնդրոց վերաբերմամբ, քանի որ համոզումի տարբերութիւն չկայ: Արդիւնք: — Այս որ՝ պահպանողական կառավարութեան տասը տարուայ (1896—1906) ժամանակամիջոցին անցուած ծրադիրներու քննութեան՝ լորդերը զոհած են 15 օր, մինչ վերջին 1906-ի Ազատական դատիարակութեան օրինագծին համար միայն վասնեցին 20 օր...

Անգլիոյ ուև գաւառ, իր զանազան բաժանումներէն կըրնայ 10—15 ներկայացուցիչ դրկել ազատական Պարլամենտին: Այս բոլորը համակիր են որոշ սկզբունքի մը, բայց այդ միենանց զաւառէն հողատէր լորդ մը՝ որ ընականարար պահպանողական է և մէկ չնչին մասը միայն կը ներկայացնէ ընդհանուր զաւառի հողային տարածութեան, ոյժ ունի լորդերու ժողովին մէջ,—ուր կը նստի ինքընտիր—այդ 10—15 ժողովը գլխն ընտրուած ներկայացուցիչներուն հակառակ քուէ տալ և անշուշտ աւելի աղքու: հետևանքով: Հարիւրաւոր հոգևորական լորդեր—եպիսկոպոսներ—ըլլալով մեծ ժառանդական հողատէրեր, կընան տասնեակ քուէ տալ զանազան բաժանումներու մէջ և այս է բուն պատճառը որ երբ այդ ապօրինութիւնը վտարող՝ մէկ հոգի մէկ քուէի միայն իրաւունք ունեցող ծրա-

դիր մը զլուեցաւ առջևնին (Plural Voting Bill) միահամուռ հո մղեցին:

Ահա այսպիսի անբացարելի առօլիք մըն է Անգլիոյ կօրդերու կամ Բարձրագոյն Օրէնսդիր ժողովը և ունենալով այս ոյժերը իր ձեռքը, կարելի է երևակայել, —չըստնոր Ազատական կառավարութեան՝ որոնք մի քանի ներկայացուցիչներ դրկած են իրենց երեմնակի վարչութեան միջոցին, —ըստուոր դասակարգի վիճակը՝ որ հնար չունի և անբնական ալ է ներկայացուցիչ մը ունենալ հնու, թէև իր կարիքները այդ մեծաշուք հոգեորական ու աշխարհական լօրդերու քմավար վաւերացման կը յանձնուին:

Ներկայացուցիչ չունին և չեն ուզեր ունենալնաև Հականդիկանները և ամրող ոյժը մնացած է մէկ և որոշ յարանուանութեան ու ակադեմիան դաւանող ինքնակոչ օրէնսդիրներու ձեռքը, ժողովրդի ներկայացուցչութիւնը, հակառակ թափած ձիգերուն, յաճախ կատարելով խրտուիլակի դեր:

Ու այս հեղինակութեամբ է որ, չնայելով ուեզացող բողոքներու, եղիսկոպոսականութիւնը ուսանած է ձեռքի տակ նախնական վարժարանները՝ տալով իր յարանուանութեան կրօնագիտութիւնը, առնելով միհնոյն ժամանակ ծախսերը հարկերէ:

Մինչև 1870 զպրոցներու ծախսերը կը հոգացուէին Տէրութեան հաշւոյն: Յիշեալ թուականին ջնջուեցաւ ոս և վոխազրուեցաւ հարկերու: Հասարակութիւնը ոյժը չունէր միջամտելու: Եղիսկոպոսներ իրենց հաշիւը լաւ խորհած էին:

1895-ին կառավարութիւնը անցաւ ազատականներու ձեռքը, Լորդ Ռոզմարիի նախարարապետութեամբ, բայց երկար չը կրցին պահել, և կարճատե շրջանէ մը յետոյ կրկնն ինկապահնողական (Թօրի) կուսակցութեան: 1896-ին Բէլֆօր, գետ այն առեն Սօլըզպրիի նախարարապետութեաններքև, յառաջ ըերտւ Դաստիարակութեան Օրինադիթ մը՝ որ յաջողութիւն չգտաւ Հասարակաց Ժողովին մէջ (House of Commons): Այս չյուսահատեցուց զինքը և յաջորդ տարին օրինագիծը վերանորոգեց, որ եկեղեցականներէ մեծ ընդունելութիւն զտաւ: Ըլլարով զրեթէ զրամական ծրագիր մը, որով առաւել զումար կը յատկացուէր յարանուանական դաստիարակութեան, ինչ որ հաճելի էր հոգևոր ու աշխարհական լօրդերուն համահաւասար:

Յաջորդ յիշատակութեան արժան շրջանը Անգլ. Պարլամէնտի՝ կը բացուի 1900-ին, երբ Ազատականներու կոչին վըրայ՝ նախորդ դահլիճը կը լուծուի և կակսի նոր ընդէ.

բութիւն։ Հար. Աֆրիկեան պատերազմը շատոնց սկսած էր և կարգ մը պարտութիւնները կրած Բրիտանական Առիւծը, Այդ արուայ պարլամենտական ընտրութիւնը բացարձակ աղացոյց է թէ անգլիական ժողովուրդը ինչպիսի կոյր ազգայնամոլ մըն է։ Պահպանուրական թեկնածուներու ուղմակոչն էր—«Ո՞վ որ քուէ տայ աղատականներու, քուէ կուտայ մեր թշնամի բօէրներուն»—որովհետեւ անոնք պրօ-բօէր ճանչցուած էին՝ կառավարութիւնը պախարակելուն՝ իր յառաջացուցած անմիտու աղետարեր պատերազմին համար։ Հետեւարար, աղատականներ կընդունուէին կամ նախառական խօսքերով և կամ, քարերով, գաւազաններով, բռունցքներով։ Այսօր, սակայն, այդ միւնոյն անհատները կամչնամն Հար. Աֆրիկէի անունը յիշել ու երբ որևէ «իմպերիալիստ» փորձէ գովեստի խօսք մը արտարերել այդ մասին՝ սուլոցներու կ'արժանանայ։ Բայց, դա հեռու է մեր հարցէն։

Պահպանուրականները, մեծամասնութիւնով մը կրկին մըտնիլով սպարամինու, տւելի զօտեպնդուած, Բէլֆօր այս անգամ (1902) ներմուծեց այլ օրինագիծ մը դաստիարակութիւնն՝ որ անգլիական ժողովրդի մէկ կարեսը մասէն զայրոյթի ճիչ մը խլեց, բայց անզօր էին զիմապրել։ Պարլամենտի մէջ փոքրամասնութիւն էին, իսկ Լօրտերու ժողովին մէջ ոյժ չկար, ուստի և անցաւ շատ դիւրաւ։

Ի՞նչ էր այդ օրինագիծի հոգին՝ աղատ Անգլիոյ «աղատամիտ» կղերներու հակառակորդ մէկ հատուածէն զրդուած։—Որ իւրաքանչիւր եպիսկոպոսական վարժարան պահուի ի հաշիւ ժողովրդին՝ հարկերու միջոցով, այսինքն, եթէ որոշ թաղի մը մէջ կայ 5 հափակըթական վարժարան՝ կամսւոր կամ այլապէս, ատոնց հոգացման պէտք է նպաստէ ամեն տնիցի, անխստիր իրենց դաւանանքին և հոն յաճախող աղոց պէտք է ուսուցուին Անգլիան կամ եպիսկոպոսական յարանուանութիւնն զօգմանները։ Բաւական չէր ալպատճը։ Վերահսկիչներու վեցէն չորսը անպայման պէտք է պատկանին անգլիան եկեղեցին։ Բոլոր վարժապետներ, նոխ քան ընդունութիւը, պէտք է ենթարկուին քննութիւնն տեսնելու թէ համակիր են այդ որոշ վարդապետութիւնն, եթէ ոչ մերժում։ Ու այսպէս, անոնք, փոխանակ ժողովրդի գաւակներուն կամաւոր ծառայողները համագիսանալու՝ անոնց յառաջադիմութեան նուիրուած, կը զանան ստրուկներ, ստէպ իրենց իսկական համոզումները կեղծել ստիւպուիլով։

Մեղ համար, որպէս agnostic և ջերմ ուաշտպան մը կրօն-

քեւ վերացման աշխարհական բոլոր հիմնարկութիւններէ, լինի գոլոցց, զատարան, պարլամենտ և այն, նշանակութիւն չունին երբէք անդիմկան կամ հականդիմկան դօգմաները. բայց խընդիրը կը լուսարաններ հոռ ընդարձակօրէնչ աւելի մէկին կուղար մը տալու թէ ի՞նչ է իսկութիւնը այս սիրոյ և երկայնամուռթեան առաքեաներուն; Երկուքն ալ իրենց հաւատոքի աղբիւրը կը նկատեն մէկ ներշնչուած «Գիրք» մը, երկուքն ալ կը զաւանին մինւնոյն «Երրորդութեան», երկուքն ալ կը կարդան մինւնոյն տողերը, բայց և այնպէս, անանկ արտակարդ մատեան մըն է այդ՝ որ ոչ մէկը կը համաձայնի միւսի բացատրութեան, ու ահա, բաժանուած, թշնամանք, կոփատեկութիւն, որսորդութիւն, աւարառութիւն միմեանց հօտին, ու այս բոլորին ներքեւ կը տուժէ միամիտ, տղէտ, հոսանքէ քշուող ամրոխը: Ո՞չ մէկը, զատարակութեան խնդիրը ծագած պահուան, ձայն կը բարձրացնէ զպրոցական curriculութիւնարեիսման ու ընդայնման համար, որ զպրոցական Շ ժամերուն ճշը կը զբաւէ և բոլոր իրարանցուամը կը գառնայ մանկան բոլորովին անէական հարցի մը շարջը՝ թէ տուաջին 1 ժամուայ միջոցին կարգացուած ու բացատրուած «Ասուուածաշնչի» դասը պիտի համաձայն ըլլայ եպիսկոպոսական թէ տզատկամ հականդիմկան դօգմաներուն:

Հոս պէտք է աւելացնել, լոկ բազգատական առուելութեան սիրոյն, որ ազատ կամ անկախ եկեղեցականներ, որուտակ կառնուին Տէրունական Եկեղեցիէն գուրս բոլոր «հերձուածականները», —ի բաց աւեալ հոռվմէտկան կաթոլիկներէն, —և որ բնակչութեան մէկ գլխաւոր մասը կը կազմին, իրապէս ազատականներ են շատ մը տեսակէտաններով ու քաղաքացիական առաւել լայն համոզումներով, ու անոնք են որ ժամանակ առժամանակ ձայն են բարձրացուցած իրենց երկրէն դուրս կատարուած անիրաւութեանց գէմ, ինչպէս հայկական ու մակեդոնական հարցերու առթիւ, և այլն, մինչնախորդները, զրեթէ պահպանողական ու կայսերամոլ (imperialist), եպիսկոպոսներու առաջնորդութեամբ, կարծես աւելի յետազէմ գոյն մը ունեցած են միշտ: Կարելի է ըսել որ կարգ մը պատերազմներ ուղղակիորէն յառաջ բերուած և քաջալերուած են եպիսկոպոսներէն լօրդերու ժողովն մէջ, ինչպէս վերջին Հար. Աֆրիկեան պատերազմը, տողա լոկ յաղթութեան ազօթքներ կարգալու և սաղրիչ քարոզներ տալու ամբիօններէն: Հետևաբար, պայքարը, որքան կրօնական նոյնքան և քաղաքական է, ինչ որ անհնարէ աղատ եկեղեցականներուն յաղթանակել՝ քանի գոյութիւն

ունի Հօրդերու ժողովը իր ներկայ սիստեմին ներքեւ։ Օգոստ չունի ազատ հկեղեցականներու ջախջախիչ մեծամասնութիւն ունենալ Հասարակաց ժողովին մէջ՝ երբ վերել կայ խմբակ մը՝ մասամբ կազմուած նոյնիսկ եալխակոպուներէ։

Ուստի, երբ, 1902-ին, այսպիսի անիբառ հանգամանք ներու ներքեւ, Բէլֆօրեան Օրինագիծը գործունէութեան շաւիղը մտաւ, Ազատ Եկեղեցականներ, զիմնելով վերջին միջոցին, կազմեցին համբաւաւոր Խոհեմ Ընդդիմադիրներու կուսակցութիւնը, որոնց նպատակն էր հարկ ըլ վճարել, երբ այդ հարկով կը սովորեցնէին իրենց զաւակներուն՝ իրենց անհամակիր գոգմաներ։ Եւ որովհետև հասաւատուած օրէնքը բացառական էր, հարիւրներ ու հազարներ զատապարտուեցան կամ առողջանքի և կամ բանտարկութեան՝ 7—14 օր։ Առանց մէջ կային առաջնակարգ քարոզիչներ, և պատժուողներու թիւը մինչեւ օրս կը հասնի մօտ 15,000-ի։

Վերջապէս հասաւ 1906-ի ընդէ. ընտրութիւնը։ Պահպանողականներ ժողովուրդը Զլայնող խաղեր չունեին այլես, մինչ ազատականներու ձեռքը կար, ինչպէս յօդուածիս սկիզբը յիշեցի, չնացի բանուորներու սքանդալը Թրանսվալի մէջ և դաստիարակութեան հարցը։

Միակ վերջինը բաւական էր որ Ազատ Եկեղեցականներ իրենց քուէն սիրայօժար նետէին աղատականներու տուփը, որոնք կը խոստանային յիսլի կերպով լուծել այս կոռւառիթինդիրը և ժողովրդի զաւկըներուն զաստիարակութիւնը դնել չիմնական, արժանավայիլ ու անշահախնդիր ազգային բարձր մակարդակի մը վրայ, աչքի առաջ ունենալով զաստիարակութեան առաւելութիւնը և ոչ թէ զանազան կարգի գոգմաներ։ Եւ որովհետեւ, ինչպէս ըսի, ազատ Եկեղեցականներ բազգագուարար աւելի լայն քաղաքացիական աշխարհահայացքներ ունին, անխօսուկ համակերպեցան սոյն առաջարկին ու յուսատուներու խօսքին ապաւինած ստեղծեցին ըլ տեսնուած ջախջախիչ մեծամասնութեամբ աղատական պարլամէնտ մը։

\*

Ու հոս պէտք է յիշատակել որ կառավարութիւնը չը թիւրացաւ իր խոստման մէջ ու պաշտօն ստանձնելէ անմիջապէս յետոյ սկսաւ գործի։

1906 փետրուարի 13-ին բացուեցաւ պարլամէնթը ու գաստիարակութեան նոր օրինագիծը յառաջ դրուեցաւ ապրիլի

19-ին պր. Օկրոսդին Բիբրըլի, գաստիարակութեան մինիստր  
և գրական ծանօթ հեղինակութեան մը\*):

Անէական ու անհետաքրքիր է այս էջերուն մէջ հասուած  
առ հասուած քննել սոյն օրինագիծը՝ իր ընդհանուր երեսյ-  
թին մէջ կը յանգէր հետևեալին:—Դուրս քաշել մանուկները  
տէրունական եկեղեցւոյ կրօնագիտական անմարսելի գօգմա-  
ներէն որուն կը գաստապարառէին անոնք առանց խտրութեան  
և վերափոխել դպրոցները թաղային հաստատութեան մը:  
Բարձրացնել և ճոխացնել բուն դաստիարակութեան պայման-  
ները և աւելի ընդարձակ ասպարէզ տալ ժողովրդի գաւակնե-  
րուն իրենց ուսումնական տենչերուն յագուրդ տալու:

2) Փրկել Անգլիոյ գեղջկական համայնքը եպիսկոպոսնե-  
րու միապետական կարգերէն ու յարանուանական դաստիարա-  
կութեան մագիստրէն՝ որոնց ենթակայ են այժմ անխտիք, և  
աւելի հզօր զարկ մը տալ անոնց մտաւոր զարգացման խկա-  
կան ուսման տեսակէտով:

3) Զերծ պահել նախակըթական վարժարաններու ուսու-  
ցիչներ այժմու քննութեան ամօթալի գործողութենէն՝ իրենց  
դաւանութեան վերահասու ըլլալու համար, պարտաւորեցնելով  
յաճախ իրենց համոզմունքներուն հակառակ գօգմաներ սովոր-  
ցնել, և դարձնել զանոնք հասարակութեան օգտին կամաւոր  
նուիրուած ծառայողներ:

4) Հաստատել մասնաւոր օրինագիծ մը՝ որով հնար ըլլար  
յաճախակի բժշկական քննիչներ ուղարկել խիստ յետին ու աղ-  
քատ թաղերը՝ տղոց ֆիզիքական վիճակին հոգ տանելու: Այս  
բարեկարգութեան անսահման մեծութիւնը կզգան անոնք մի-  
այն որ տեսած ու զննած են մասնաւորապէս լոնդոնի յետըն-  
կած թաղերը, ուր թշուառութիւնն ու չքաւորութիւնը կը տի-  
րապետէն երևակայութենէ անդին:

Երբ երեան եկաւ այս Օրինագիծը Հասարակաց ժողովին  
մէջ, ամբողջ 30 օր, զանազան ընդմիջումներով, հարցապնդու-  
մի նիւթ եղաւ: Սակայն, ընդդիմագիր ոյժ (opposition) կազմող  
պահանողականութիւնը ըլլալով աննշան, զրեթէ անսարգել  
անցան շատ մը հասուածներ, որոնք մի առ մի քննութեան  
կենթարկուէին:

\*) Նախ քան Բ. Նիստէ բացումը պարլամենտի, կարգ մը փոփո-  
խութիւններ տեղի աւնեցան դանլիճի մէջ: Պը. Օկրոսդին Բիբրըլ կար-  
գուեցան առաջին քարտուզար (chief secretary) իրլանդայի, փոխարինելով  
պը. Զէյմս Պրայսի, այս վերջինս ալ դրկուելով Վոշինկթըն որպէս դիս-  
պան Բրիտանիոյ:

Բարեփոխումներ եղան անշուշտ, ինչպէս իոլանդացի կամոլիկներէ \*) հականգլիկաններէ, բանուոր գասակարգի ներկայացուցիչներէ, բայց այս բարեփոխումները այնքան բանացի ու տրամարանական էին՝ որ դրեթէ միահամուռ հաւանութեան արժանացան:

Կրօնական ուսումը վերցուած չէր. ուրիշն ի՞նչ ձեր տակ պիտի ուսուցուէր այդ վարժարաններու մէջ:

Ահա ամփոփումը:—«Աստուածաշունչը» պիտի կարգացուէր որպէս պատմութիւն կամ զրական մատեան մը, առանց գոգմատիք բացատրութեանց, որով և ուսուցիչը, ինչ աղանդի ալ պատկանէր, ազատ կը մնար պարտաւորութենէ: Այս սկզբունքի մօտ ուղղութիւն մը, թելադրուած ըլլալով տարիներ առաջ նոյն տէրունական եկեղեցին պատկանող կրօնականէ մը, Կառավար-Տէմպլը,—կը կոչուէր Cowper-Templeism:

Որքան ալ, ընդհանուր առումով, քիչ անդնական ուղղութիւն մը սա, քանի որ այդ մատեանը անհնար էր ուսուցանել առանց լացատրութեան կամ որպէս պատմութիւն՝ որմէ զուրկ է բոլորովին, այնուամենայնիւ, նայելով ինդրին կրօնական ու կրօնամոլութիւնով թաթախուած հասարակութեան մը տեսակէտով՝ որ կը սարսափի կրօնքի ուսման վերջնական վերցումը լսելով, այնքան ալ առարկելի չէր և երկու չարիքներու փոքրագոյնը, նամանաւանդ ազատ եկեղեցականներու համար:

Բանուորականներ, հակառակ, ինչպէս յայտնած էի անցեալ յօդուածիս մէջ, իրենց ոմանց կրօնական հակումներուն, միաձայն նկատեցին անգործնականութիւնը այդ քայլին և առաջարկեցին բացարձակ աշխարհական գաստիարակութիւն (secular education), միանգամ ընդմիշտ վերցնելով կրօնական ուսումը վարժարաններէն, որպէս ամենէ ապահով միջոցը բանակիւներէ ու թշնամնքէ զերծ մնալու: Բայց, այսպիսի վարժունք մը խիստ վաղաժամ էր Անգլիոյ նման երկրի մը ու առաջարկը ետ մղուեցաւ:

Կը մնար անդին եպիսկոպոսական կամ աւելի՝ ուահպանողական առարկութիւնը: Եւ ասոնք, գտնուեցան այնքան անպատկառ, որ ոչ միայն պարզ ու մասնակի փոփոխումներ պահանջեցին, այլ և պնդեցին թէ յարանուանական ուսումը

\*) Աւելի ճիշտ է կոչել ասոնք իոլանդացի աղքայնականներ: Բառական զօրաւոր ներկայացուցչութիւն մը ունին նաև կօրդերու ժողավին մէջ, բայց, համանման պարագներու տակ աւելի կը նախընտրին հեղող պահել քան թէ քօմբրօսիկ ընմել:

ովէտք էր անխախտ մնար դպրոցներու մէջ, ու կրկին ժողովրդի հաշոյն: Անուաննեցին ազատականութիւնը աւազակ՝ որ իրենց մասնաւոր, այսինքն տէրունական և կեղեցւոյ գումարով շինուած վարժարանները յափշտակել կուգէր, և այցն Մինչդեռ, ճշմարտութիւն է թէ յիշեալ օրինագիծը պիտի յատկացնէր Յմիլիօն ստերլինկ՝ հարկ եղած պահուն գնելու ու և եպիսկոպոսական վարժարան՝ ուր յաճախող տղոց մեծամասնութիւնը կը կազմէին տարբեր ազանդներ և կը նախքնտրէին նոր օրինագիծի համաձայն շարժիք Բացի այդ, արքունի գոնձը պիտի արամադրէր 1 միլիօն ռուկի՝ էական նորոգութեանց ու հարկերու վճարման այլ և այլ դպրոցներու:

Այսուհանդերձ, ուահպանողական ընդգիտմադրութիւնը՝ եպիսկոպոսական գօղմաններու վերացումը դպրոցներէն՝ կը համարէր «Ճնորաց իրաւունքներու» բոնաբարում, լան մը՝ որ յիշատակուած իսկ չէր Բէլֆօրի 1902-ի օրինագիծը լոյս ընծայուած պահուն, երբ հարիւր հազարաւոր ճնողներու իրաւունքները աննկատօրէն ոտնակոխ կը լինէին:

Կառավարութիւնը յամառութիւն ցոյց չը տուաւ: Որպէս զի աշառու և միսկողմանի չըլլայ՝ որտոնեց որ դպրոցական հինգ օրերու երկուքը, եպիսկոպոսական ճանչցուած վարժարաններու մէջ, օրական մէկ-երկու ժամ յատկացուին իրենց մասնաւոր գօղմաններու ուսուցման, բայց սո՞ւ ոչ թէ դպրոցի ուսուցչին կողմէ, այլ իրենցմէ (եպիսկոպոսականներէ) յատկառքս ընտրուած մէկը մը, ու այն ևս ոչ թէ ժողովրդի հաշոյն:

Այս կարգադրութիւնը ընդունելի չեղաւ Բէլֆօրի խըմբակին և պնդեցին դպրոցական հինգ օրերու հինգն ալ յարանուանական դաստիարակութեան անհրաժեշտութեան վրայ, ինչ որ անկարելի հղաւ անցնել և 30 օրուայ տաք վէճերը աւարտեցան հասարակաց ժողովին մէջ մէկի զէմ չորս քուելի առաւելութիւնով և ինդիրը անցաւ Լօրդերուն՝ անսնց քննութեան ևնթարկուելու:

Յօդուածիս սկզբնաւորութեան յայտնեցի թէ ինչպիսի մարմնէ մը կազմուած էր այս ժողովը. ով էին բազմողները, ինչ ողղութեան դաւանող և ինչպէս տիրացած այդ բաղդին: Հետեարար, Բէլֆօր, իր ժողովրդի ներկայացուցչութեան ժողովին մէջ կը պահանջութեան ոիլը պահելով, կենարոնացուց ոյժը Լօրդերու ժողովին վրայ:

Սոյն իշխանիկներու ժողովը մարիօնէիներու հաւաքում մըն է՝ որոնք կը շարժին ու կը խօսին մեծամասնաբար համաձայն իրենց առաջնորդներու թելադրանքին: Պահպանողա-

կան աշխարհական առաջնորդն է Լօրդ Լէնստաուուն—նախկին վարչութեան արտաքին գործոց նախարար, բայց վերջին զատիարակութեան ծրագիրը շօջափուած պահուն բովանդակ կօնտրօլլ ինկաւ Քէնթըրուէրիի արքեպիսկոպոսին ձևաբը, կրօնապետ համայն Անգլիոյ եպիսկոպոսական հատուածին: Իոկ այս բոլորը թելադրուած էին կանխապէս Բէլֆորէ՝ ա տու քրիչ կամ մերժել դաստիարակութեան նոր օրինագիծը և կամ բոլորովին կերպարանափոխել եւ բուն սա էր շարժառիթը իր այնքան սինիք վարձունքին՝ երբ որոշումները չախջախիչ մեծամասնութիւններով կանցնէին Վարի Փողովին մէջ:

Ու դեռ առաջին օրէն սկսաւ, — ինչպէս այլ ևս սովորական բառ մըն է դարձոծ տեղական ազատական մամուլին մէջ — «բորտակումի» (wrecking) գործը և անեց ամրող 20 օր:

Ազատականներու ոյժը ըլլալով չափազանց սահմանափակ Լօրտերու ժողովին մէջ, Օրինագիծը փոխեցին, անդամանատեցին, տեղեւ բոլորովին գուրս ձգեցին և դարձուցին նախորդէն տարրեր, — թէ հոգիով և թէ սկզբունքով, — օրինագիծ մը, խընդիրը վերստին յանգեցնելով վաղեմի տպօրինութեանց: Լօնդոնի եպիսկոպոսապետը լօրտերու սոյն վարձունքը՝ չոչակած է «Աստուածային սրբազն գործ մը» և թերեւ այդ է պատճառը որ անոնք այդքան սանձարձակ յառաջ գացին, և ինչ որ, պէտք է յիշել, ամենամեծ հարուածը իրենց անսլէտ գոյութեան:

Պարլամենտը շուարած կը դիմէր այս բոլորը նոյնքան այլայլած էր նաև հաստակութիւնը, բայց, խորտակիչներ ու իրենց պետք յոյս մը ունեին:

Դաստիարակութեան Օրինագիծի հետ միաժամանակ լօրտերուն զրկուած էր ուրիշ մը, Առևտորական Վիճուց Օրինագիծը (Trade Disputes Bill) որ առաջազրուած էր բանուորականներէ և անարդէլ անցած: Յիշեալը կը պաշտպանէր բանուորներն ու իրենց tradeunion-ները զործադպուլերու առթիւ՝ զործարանատէրիւու զանազան տպօրինի պահանջներէն, — ինչպէս արտաքսուած գործաթող բանուորին, չվճարում առնիկի և առելին՝ զերծ կը պահէր tradeunion-ները դատական ու օրինական պատասխանատութենէ զործադպուլերու ժամանակ՝ որպէս պարագան էր նախապէս, որով, զործարանատէրեր, օրէնքի դիմելով, կը ներկայացնէին միութիւնները իրը թշնամիներ և հատուցում կը պահանջէին եղած փասուց:

Սա անպիսի օրինագիծ մըն էր՝ որու վրայ ամեն գործառը քիչ թէ շատ գաղափար ունէր և կը ճանչնար ատոր իրեն շնորհած բարիքները: Հիտեարար, լօրտեր ու Բէլֆոր հոյական

միտք մը յղացան. փոշի փչել զործաւորներու աշքին և ճանապարհը հարթել դաստիարակութեան մերժման։ Այսպէս, համաձայն պր. Բէլֆօրի յորդորին, այս արհամարհուած ծրագիրը անցաւ անփոփոխ, թէպէտե, շատ անյուսալի մը դաստավարտելու զործագիրները, վասն զի, պր. Քիր Հարտի, բանուորական-մերը երբ նկատեց սա, յայտարարեց պարլամենտին մէջ բացէ ի բաց որ՝ «եթէ բանուորականութեան հետ հաշտութիւն կը մատագրուէր՝ ժողովուրդը կաշառելով լորտերու ժողովի գոյութիւնը հանդուրժելի ընել իրեն՝ կաշառ ընծայողները շատ ողբալիօրէն յուսախար պիտի ըլլային», ինչպէս որ ալ եղան։

Կաշառը Ուսետրական Վիճուց Օրինագիծն էր և Անգլիոյ պարլամենտական պատմութեան մէջ նախորդը չունեցող կաշառ մը, քանի որ լորտեր հոգիով սրտով դէմ էին ատոր և նոյն լորտ էնսատառնն կը յայտարարէր թէ սա այնպիսի օրինագիծ մընէր որու հոգանութեան ներքի կարելի էր զործուել այնպիսի բաներ՝ որ կորուստ, մարմնային չարչարանք, անհատներու մտաւոր կոկիծ կը նշանակէր, մինչ այլ լորտ մը, աւելի անզուսալ իր զայրոյթին մէջ, կրաքը թէ «ասկէ աւելի անարդար, ասկէ աւելի բրոնավետական» օրէնքը մը անկարելի էր մտարերիլ և «ասհմանագրութեան հոգույն բացցարձակատկոս հակառակ» նկատելով հանդերձ, կաւելացնէր որ այսպիսի «անսամօթ հատուած մը տեսնուած չէր երբէք Անգլիոյ օրինագրութեանց մէջ»։ Բայց և այսպէս, անշշուկ անցաւ այս ինչու։ Ահա թէ ինչ կրաք էնսատառն. — Որովհետեւ, որքան անարդար, ապօրինի ու անբնական, ատի կը պատկանի ժողովրդի այս հատուածին՝ որուն իրենք մասնակցութիւն չունին և չեն կրնար իրենց ճշգրիտ վճիռը տալ, և... հետևաբար, անփոփոխ կանցնեն... Աւ այս ծիծաղաշարժ պարբերութիւնն էր որ առիթ տուաւ ողբ. Քիր Հարդիի վերոյիշեալ յայտարարութեան։

Մարգիկ որ, տարիներ շարունակ խօլարար մերժած էին ժողովրդին անմիջական շահերը շօշափող ծրագիրներ, որ անաեսած էին ամէն արդարութիւն՝ բացի իրենց անհատական շահերէն, ճիշտ այդ մասնաւոր պարագային կը յղանային աշխատաւոր դասակարգի իրաւունքը ճանաչելու միտքը կամ կզգային իրենց անատակութիւնը՝ իրենցմէ անջատ դասի մը ճակատագիրը վճռելու... Եւ, ի մէծ ուրախութիւն ամէն գործաւորի, անշուշտ, օրինագիծը անցաւ լորդիրէն և կարգը և կաւ Դաստիարակութեան Օրինագիծին։

Թէպէտե, արդէն այլակերպուած հպիսկոպոսներու ձեռքը և հիմնովին անմիտ ծրագրի մը փոխուած, Ազատական լորտեր

ջանացին, նախ քան վերջնական բաղդը, համահաւասար գոհոզ գոթիւններով կօմպրոմիս մը յառաջ բերել, որովհետեւ, ազատականներու մէջ ալ կայ հսկայ հատուած մը՝ որ կը պատկանի Տէրունական Եկեղեցւոյն:

Ժամանակ արուեցաւ լորդերուն մատածել և տրամարանտեկան համաձայնութեան գալ կառավարութեան հետ երկուստեք զիջումներով: Սա, թէս ոչ հաճոյ հականզիկաններու, այսուամենայնիւ լուռ համբերեցին, տեղի աղետարեր վախճաններու ասիթ շատրւ համար: Եպիսկոպոս մը, կողմանակի ժողովի մը մէջ համարձակութիւն ունեցաւ յայտարարել թէ ներկայ դատարակութեան Օրինագիծը միահամուռ մերժել՝ կը նշանակէր ճանապարհ բանալ աստուածաշունչի գպրոցէն շուտով արտաքսման, սակայն, այս ամենը ոյժ չունեցան եպիսկոպոսներու վըրայ: Իրենց «անպատկառ յամառութիւնը» քշեցին յառաջ մինչև վերջին աստիճանին և այդ խորտակուած ու այլակերպուած Օրինագիծը անզամ մը ևս զրկուեցաւ Վարի ժողովը աչքէ անցուելու:

Հոս, առաջին միծ ատենաբանութիւնը ըրաւ պր. Բիբբը, յայտարարելով թէ՝ այնքան փոխուած, կտրատուած ու այլանգակուած էր՝ որ իր Օրինագիծը ինք իսկ չէր ճանաչէր: Այդ պարագային էր որ պարլամենտի ամեն անկիւններէն Բէլֆորի երեսին պոռացին «խորտակի՞չ», «խորտակի՞չ» մակդիրը՝ որովհետեւ ան էր զրդած լորդերը մերժել կառավարութնան օրինագիծը իսկութեամբ:

Վերջին ու ամենանդօր փակման ճառը արտասանուեցաւ նախարարապետի կողմէ, Սըր Հէնրի Քէմպըլ-Բէնըրմէնէ, որ միծ ու նշանակելի ճառ մը պիտի մնայ պարլամենտական պատմութեան մէջ: Սըր Հէնրի ծայրայելու ու եռանդուն գեմոկրատ աղատական մըն է: Սկսվական անժխտելի կամք և գիւրաբրոբրոփ բնաւորութիւն մը ունի՝ որ նամանաւանդ երբ ինդիրը Բէլֆորի ինտրիգներուն հետ է զսպել չկրնար: Լուս ու երկար համբերեց՝ տեսնելու թէ մինչև ուր պիտի համնի լորդերու խաղը և երբ այս փախճանին յանդեցաւ, անկարելի դարձաւ դիմադրել զայրոյթը և ճառին փակումը ոչ միայն խրոխտ յայտարարութիւն մըն էր՝ այլև յանդուզն սպառնալիք մը լորդերու գոյութեան կամ աւելի ճիշտ է ըսկը, այժմու վիճակին, քանի որ անոնք բացարձակ կոյր թշնամնքով կը վարուէին աղատական ծրագիրներու հետ և ամբողջ պարլամենտի մը երկարատես ջանքերը մէկ հարուածով մը կը խորտակէին:

«Հասարակակաց ժողովի միջոցները վերջացած չեն, — կատարակը Քէմպըլ-Բէնըրմէն իր ճառք ովորուած չափերու մէջ

— և հս համողումով կրոեմ թէ ճար մը պէտք է զո՞նուի, ճար մը պիտի գտնուի՝ որով ժողովրդին կամքը, արտայայտուած իր ներկայացուցիչներուն միջոցաւ այս ժողովին մէջ, պիտի տիրապետէց: Ու ասով փակուեցաւ ամբողջ ինսդիրը ու սուրբամենաի առաջին նիստը վերջացաւ Ծնունդի ու Նոր-Տարուայ առթիւ, որ մինչև այժմ շատոնց վերսկած է արդէն:

Սոյն ապօրինի արարքէն ու Սըր Հէնրիի հզօր ճառէն յետոյ՝ այժմ ամեն աղատական, արմատական ու իրլանդացի կաթոլիկներու (ազգայնականներ) մեծ մասը իրենց ուշը կետրոնացուցած են Լորդերու ժողովին վրայ: Ոմանք կը պահանջեն անպայման խափանում, ինչ որ անհնար է: Ուրիշներ կը թելադրեն բարեփոխում: Իսկ մէկ մասն ալ վերացում ժառանգականութեան, որով անոնք միայն կրնան նստիլ՝ որ մասնաւորապէս բարձրացած են այդ աստիճանին ի վարձատրութիւն իրենց մէկ որևէ կարևոր ծառայութեան:

Բայց, անոնք որ քիչ թէ շատ ուսումնասիրուծ են անգլիացի հասարակութեան հոգերանութիւնը և աիրոզ հսկայ դասակարգային անջրպեսները, շատ գժուար է անոնց հաւատալ թէ այդ դադափարներէն ունէ մէկը իրականութեան վերածուի՝ նոյն ուղարական կառավարութեան մը ամենափայլուն շրջանին իսկ քանի որ աղատականութիւնը, մեծ մասամբ ըլլալով բարձր դասակարգի մենաշնորհ մը և տեսնելով թէ ժողովրդի իսկական ձայնը տակաւ կը բազմանայ Հառարակաց ժողովին մէջ, բազմացող է Վերին ժողովի մը գոյութեան՝ «ուամկութիւնը» սանձարձակ չվագելու համար:

Այսուհանդերձ, ազատականներ որոշած են,— և միայն այդ, այլև պարտաւորուած են,— Լորդերու ժողովի հարցը երկան բերել ներկայ նիստին՝ որպէս զի տեսակ մը «բարեփոխում»—որքան ալ անձուկ վիճակի մէջ—մտցնեն և տապարէզ ունենար գործելու և իրենց ծրագիրները իրագործման շաւղին մէջ դնելու, որուն համար զրուեցան պաշտօնի:

Թէաէտի իրենց «միջին ճանապարհի» և «կօմպրոմիպի» եղանակները շատ հաճիլի չեն ու ելի արմատական անդամներուն, որոնք, բանուորականներու նման, բացարձակ խափանումը կը պահանջին այդ անպէտ ժողովին, սակայն, աղատականութեան յաւիտենական սիստեմն է սա, ու չափիտի բարձմաննք որ յիշեալ հարցը, մեծ իրարանցումի հետ միստին, անհաճոյ միջնակուսակցականն բաժանութեար ալ սունդէ, ինչպէս որ այժմէն իսկ նշանները կը տեսնենք:

Բայց կառավարութիւնը կը վստահեցնէ թէ եթէ ներկայ «մեղմ նախագուշութիւնով» չպատասխան աղնուաշուք լորդերը

և իրենց յամատ վարժունքը յառաջ վարեն, ասիկա նախակարապետը պիտի լինի աւելի ծայրայեղ միջոցներու, մինչև որ միանգամ ընդմիշտ յդկուի այս խորթութիւնը ամենէ հին ու ամենէ ազատամիտ սահմանադրական պարլամենտի մը վրայէն.

Առաջին փորձը պիտի ըլլայ բարենորոգում. իսկ եթէ այդ անյաջող անցաւ, ապա կը մնայ միակ ելքը.

If it can't be mended, it must be ended. (Եթէ կարելի չէ նորոգել, պէտք է խափանել):

Մինաս Յովակ

## ՀՐԱՃԱԼԻ ԳՈՏԻ

(Պատկեր)

Տիկին Մարիոմը սեղանի տուաջ նստած նամակ էր զրում,  
երբ նրա ընկերունի Սիրանոյշը մտաւ նրա մօտ:

—Ի՞նչ լաւ հվատ որ եկար, առայ տիկին Մարիամը, ընկերունուն բարեկերուց յիսոյ ու տուաջարկեց նստել միայն թէ չխանգարի:

—Ի՞նչ բանի ես որ, հարցրաւ ընկերունին:

—Նամակ եմ զրում:

—Ի՞նչ նամակ է, ում ես զրում:

—Անդին եմ զրում:

—Անդին, ով ունիս այնտեղ, որպիս այնտեղ է սովորում:

—Ոչ, նա Շուշյարեայումնէ:

—Ապա ում ես զրում:

Այսօր մի ճրաշալի յայտարարութիւն եմ կարգացել մի լրագրում: Եթէ իմանաս որքան եմ ուրախացել, զու կարող ես երեակայել, որ այժմ պառաւները կարող են երիտասարդանալ:

—Ի՞նչ, պառաւները կարող են երիտասարդանալ, հա հա հա:

—Մի ծիծաղիր, սպասիր պատմեմ, յայտարարութեան մէջ գրուած է, որ կայ մի այնպիսի ճրաշալի էլեկտրական գօտի,

երբ կապես՝ գէմքդ կը թարմանայ, աչքերդ աշխոյժով կը լցուին,  
այնպէս, որ պատաւը ոչնչով չի զանազանուիլ իսկական երի-  
տառարդից:

—Եւ դու էլ հաւատում ես այդ յիմար ըեկամներին, ո-  
րոնք ուրիշ ինչ են, եթէ ոչ փող ստանալու թակարդներ:

—Ի՞նչ անեմ, հոգիս, ուզում եմ քերել տամ, փորձեմ. էլ  
հնար չկայ, ուզում եմ երիտասարդանալ, թարմանար:

—Ախար ի՞նչ կարիք կայ, այսուհետեւ մեմ ես ցանկանում  
գուր գալ, արդէն աղջիկդ հարսնացու է հաշւում:

—Ես ուզում եմ ամուսնուս գուր գալ, այն անպիտանին,  
որ հոգիս հանում է, հանգիստ չի տալիս իր ծագրներով: Օր  
չի անցնում, որ չիշեցնի ինձ իմ պատութիւնը: Անտանելի  
է դարձել, մի մարդավարի խօսք չեմ լսում բերանից: Անտեղի  
նկատողութիւններին վերջ չկայ, թունալից ակնարկներ՝ որքան  
կուզես... Ամբողջ օրը թթուած, մրկած: Երբ մենք ու մենք  
ենք—նրա գէմքին ժամիտ չեմ տեսնի. բայց դու արի թամաշա  
արա, երբ մի ջանիլ, սիրուն կին տեսաւ. իսկոյն փոխում է,  
բացւում, խնդում, ժամում, հանաքններ անում և ոտտոսում,  
ինչպէս լիշ գտած կաչաղակ. 20 տարեկան երիտասարդների  
հետ է մրցում:

—Թանի՞ տարեկան է:

—45:

—Իսկ դժու:

—Ես 39:

—Դու 39, ինքը 45, հիսկ լաւ է, ուրեմն ինքն աւելի հա-  
սակաւոր է, տարիքը ստած է: Այս, բայց ինչ արած, որ միր  
այժմէան աղջկերքը պատաւ—ջանիլ այրի, ամուս-  
ցած չեն ջոկում: Պիտի տեսնես, թէ ինչպէս են հետր խուն-  
ջիկ մունջիկ անում, ինքն էլ նրանց հետ:

—Օհօ, ինչ անպիտանն է, ես նրան լուրջ մարդ էի համա-  
րում: Դու երեխ սաստիկ ես սիրում, որ խանկոտում ես:

—Սիրել, այդ էր պակաս, որ այդ գաղանին սիրեխ: Ես  
երբէք էլ չեմ սիրել!

—Ապա ի՞նչո՞ւ ես ամուսնացել:

—Ապրելու համար, ապա մինչեւ երբ պէտք հօրս շլնքին  
հստէի:

—Իսկ ի՞նքը՝ քեզ սիրե՞լ է:

—Դու ինչ ես ասում, ուզել է ինձ հենց այնպէս, նրան  
կին է եղել հարկաւոր...

—Այդ լաւ է, նրան կէն էր հարկաւոր, քեզ ապրուստի մի-  
ջոց, և դու քեզ ծախել ես... Սովորական բան..., եթէ այդպէս

է և բանը այդտեղ է հասել՝ թող ինչ ուզում է անէ, գուրաժանութիր:

—Բաժանութեամ, ինչով ապրեմ... Ես զողում, սասսոսում եմ, չէ որ նա սիրուհի կը գտնի և աշխատանքը բոլորը նրա համար կը փչացնի, իսկ ինձ կենթարկի քաղցի...

—Սովորիր ինքդ քեզ պահել քո սեփական աշխատանքով, այն ժամանակ այդպիսի հաշխներ չես անիլ, այն ժամանակ չես էլ ստորանակ... Սեփական աշխատանքդ միայն կը տայ քեզ տնկախութիւն:

Դին

## Ի՞նչ Են ՈՒԶՈՒՄ ՍՈՑԵԱԼ-ԴԵՄԾԿՐԱՆԵՐԸ

(ԳԵԴ և ԼԱՓԱՐԳ)

III \*)

Արտադրութեան մէջ այժմ էլ հսւաքական աշխատանք պահանջող միջոցների հասարակականացումը հնարաւոր է միայն կապիտալիստ դասակարգի էքսպլուատացիայով իրագործել:

Այն մարդիկ որոնք խոյս են տալիս այդ էքսպլուատիացիա խօսքից, չուզենալով վախեցնել ժառան, անտարակոյս մոռանում են.

1) Որ ներկայ կապիտալիստական հասարակութեան մէջ տնտեսական զարգացման իւրաքանչիւր քայլի հետ կատարւում է էքսպլուատացիա, այսինքն սեփականութեան խլումն:

2) Որ էքսպլուատիացիան, որի մասին խօսում են

\*) ՏԵ՛ս «Մուլճ» № № 2, 3.

ոօցիալ-դեմօկրատները, որ օրի վրայ հեշտանում է, գոյութիւն ունեցող յարաբերութիւնների զարդացման անընդհատ ընթացքով:

3) Որ միայն էքսպրուզրիացիան է բաւարարութիւն տալիս սեփականութիւնից զրկուածներին:

4) Որ արտադրութեան հէնց պայմանները իրանք աւելի և աւելի անխուսափելի են դարձնում էսքպրո-պլրիացիան: Արդիւնագործական պրոգրեսով՝ այդ մեր գարու աստուածութիւնը, իր հետ բերաւ իրենց տնե-րում, իրենց հաշուով, իրենց գործիքներով աշխատող արհեստաւորների էքսպրոպրիացիան, որովհետև այդ արհեստաւորները իրանք զրկուեցան 1) իրենց գործիք-ներից, որոնք նրանց ձեռքում անպէտք դարձան, 2) ի-րենց տեխնիկական հմառութիւնից որ մեքենաների և զանազան կատարելագործութիւնների ներմուծումից յե-տոյ կորցրեց իր արժէքը, 3) իրենց օջախից որ դա-տարկուեց որովհետև իրենց երեխաններին և կանանց ստի-պած եղան գործարան ու զարկելու և 4) իրենց աշխատանքի արդիւնքներից, որոնք շահի կամ դիվիդենտի անուան տակ կենտրոնացան առանձին ձեռնարկունների կամ ակ-ցիօններական ընկերութիւնների ձեռքում:

Ժամանակակից արտադրութեան զարդացման ըն-թացքը այնպէս է որ մարդկային գործունէութեան բո-լոր ոլորտներում նա շինում է միայն տւերակների վրայ, ստեղծում է խոշոր հարստութիւններ, քայլացե-լով մանր բարեկեցութիւնները: Մեծ քաղաքների հսկայ խանութները մեզ ասում են անթիւ մանր մունք խա-նութների մնանկութեան մասին. երկաթագործական ա-հագին գործարանները մեռցրին հարիւրաւոր կամ հա-զարաւոր դարբեին արհեստաւորներին և այլն:

Սօցիալիզմը պահանջում է ընդհակառակը. խլել սեփականութիւնը հարուստներից յօդուած չքաւորների, կատարել փոքրաժամնութեան էքսպրոպրիացիան յօդուած զրկուած մեծամասնութեան: Մի խօսքով էքսպրոպրիա-ցիա անողների էքսպրոպրացիան է պահանջում: (Ու-

բիշների սեփականութիւնից զրկողների սեփականազըրեկում): Մեծամասնութեան պէտք է վերագարձնել այն ինչ խլել է նրանից վորքամասնութիւնը. այդ վորքրամասնութիւնը օրէցօր նուազում է իր թուով շնորհիւ սարսափելի մրցութեան հէնց իր միջավայրում: Պէտք է նկատել որ հէնց իրենք կապիտալիստները բաւական թեթևացնումն սոցիալիզմին սպատակի իրականանալուն—անձնապէս աւելի և աւելի հեռանալով արտադրութիւնից, որի մասին նրանք նոյնքան են հոգ տանում որքան չինական կայսրը: Կապիտալիստները չեն որոնք կառավարում են արգիւնագործութիւնը, այլ վարձու գործակալները, ուստի կապիտալիստներին հեռացնելով այդ խոշոր ձեռնարկութիւններից, ոչ մի ազգեցութիւն չի անուիլ այդ խոշոր արդիւ ազործական ձեռնարկութիւնների վրայ:

Միւս կողմից, միմիայն այդ էքսպրոպրիացիան կը տայ լրիւ վարձատրութիւն այն բոլորին, որոնք զրկուել էին սեփականութիւնից: Հասարակական, սոցիալիստական էքսպրոպրիացիայի հետ առաջ են գալու մի շարք հասարակական, հանրօգուտ հաստատութիւններ մասնուկների, ծերերի, հիւանդների համար և այլն:

Հասարակական էքսպրոպրիացիայի անհրաժեշտութիւնը սղխում է ոչ միայն բանուոր դասսի աղքատութիւնից և չափազանց աշխատելու ծանրութիւնից մամնաւոր սեփականութեան պայմաններում, այլև նրանից որ ժամանակակից տեխնիկան, բանելով շոգիի և էլեքտրականութեան ոյժով, արտադրութեան միջոցները այնպիսի հզօրութեան է հասցըրել, որ սեփականատէրերի առանձին տուանձին ոյժերը այլևս անկարող են կառավարել և վերահսկել այդ արտադրութեան վրայ համեմատ շուկայի պահանջներին. հետևանքը տագնապներ, կրիզիսներ, որոնք աւելի սաստիկ են ցնցում հասարակական օրգանիզմը քան պատերազմները և համաճարակները: Այդ կրիզիսները կարող է վերացնել միայն հասարակութիւնը, որ տիրապետում է արտադրութեան միջոցների և ար-

դիւնքների վրայ։ Այդ նպատակին կը ծառայի, օրինակի համար, պահանջների վիճակագրութիւնը, որով կը զեկավարուեն բանուորներին արդիւնագործութեան զանազան ճիւճերի մէջ բաժնելիս, իւրաքանչիւր ճիւղի մէջ աշխատանքի անհրաժեշտ տեւողութիւնը որոշելիս։

## ԱՆՀԱՏՆ ՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Պրոֆ. Ա. Ա. Խայել.

I. Անհատի առաջ խոնարհուելը։ II. Միջավայրի արած ազդեցութիւնը անհատի վրայ, III. Միջավայրի արած ազդեցութիւնը քրիստոնէութեան սկզբնաւորութեան ու տարածման վրայ։ IV. Միջավայրի ազդեցութիւնը Դարվինի վարդապետութեան վրայ։ V. Միջավայրի ազդեցութիւնը Մարքսի վարդապետութեան վրայ։ VI. Միջավայրի ազդեցութիւնը օրէնսդրութեան արմատական փոփոխութիւնների վրայ։ VII. Անհատի ու միջավայրի յարաբերութեան փոփոխութիւնները։ VIII. Հասարակական կազմի արմատական բարեփոխութիւնը գէպի սոցիալիզմ չէ կարող կատարուել բացարձակ միապետի ձեռքով։ IX. Ապագայի հեռանկարը։

### I

«Աշխարհի պատմութիւնը մեծ մարդկանց կենսապլութիւն է միայն» ասել է Կարլեյլը, նա այս Փորմուլայի մէջ արտայայտել է այն գնահատութիւնը, որ հազարամետակների ընթացքում մարդկութիւնը արել ու շարունակում է պնել անհատի ու ամբոխի համար։ Այս գնահատութիւնն է երևան դա-

լիս ժողովրդական բանաստեղծական ստեղծագործութեան մէջ, որը վերագրում է հականերին, հերոսներին այն բոլոր բարեմանութիւնները, որոնք համապատասխանում են ժողովրդի իդէալներին և վերագրում է այնպիսի չափերով, որոնք նրա երեխայական հարուստ երեակայութիւն արդիւնք են: Կարլեյլի Փորձուալն է ծածկում պատմագիրների պատմութիւնը մինչև մեր օրերը, երբ որ Ալեքսանդր Մակեդոնացուց և Յուլիոս Կասարից այն կողմ ահօանելի չեն ոչ յունական և ոչ էլ հռովմէական հասարակութիւնները, իսկ Նապոլէօն Լի կեանքին վերաբերող բոլոր մանրամասնութիւնների քրտնաշան ուսումնասիրութիւնը ստուերի մէջ է թողնում նաև այն մարդկանց, որոնք օգնեցին նրան ելնել այդ բարձրութեան վրայ, ստուերի մէջ է թողնում նաև Ֆրանսիայի ու Եւրոպայի միւս երկրների միջավայրը, որը արգելվ չհղաւ, որ նա կառավարէր նրանց բախտը: Այս Փորձուալն իրու «օրէնք ու մարդարէներ» է ծառայում զբականութեան պատմագրի համար, որը հաւաքում է Գէօթէի ամենամանր նկատողութիւնները և չէ մոռանում յիշշել Պուշկինի կոճակը: Այս գնահատութիւնն է պարունակում Նիշչէի գերմարդի վարդապետութեան մէջ...

Կարլեյլը մի քանի խոշոր պատմական անձնաւորութիւնների պատկերները գծելով այն համոզմունքն է արտայայտում, թէ այն մարդը, որի մէջ բնութիւնը մեծութեան սաղմեր է դրել, անպայման երեան կը գայ իրք մեծ մարդ: Այս բանի վրայ կասկածել չէ կարելի, հարցը միայն նրանումն է, թէ գործունէութեան ինչպիսի օգապատում (եփերա) նա ցոյց կը տայ իր մեծութիւնը՝ Միասնակ չեն այն հանգամանքները, որոնք շրջապատում են հերոսին նրա ձիրքերի զարգացման ու նրա գործունէութեան որոշման ժամանակ, սակայն ինչ տեսակ էլ լինեն հանգամանքները, նրանք այն մեծ ձիրքերի զարգացման հնարաւորութիւն են տալիս, որ բնութիւնը զրել է նրա մէջ: «Բնութիւնը բոլոր մեծ մարդկանց, ինչպէս և բոլոր մարդկանց ընդհանրապէս, մինչոյն շաբլոնով չէ ստեղծում: Հակումների բազմատիսակութիւնը անկասկածելի է: Բայց աւելի անսահման կերպով մեծ է հանգամանքների բազմատիսակութիւնը, և շատ աւելի յաճախ մեզ պատահում է գործ ունենալ վերջին բազմատիսակութիւնների հետ: Այսաւել կրկնում է այն, ինչ որ աեղի է ունենում հասարակ մարդի հետ նրա՝ արհեստ սովորելու ժամանակի... Խնդիրն այն է, թէ նա ի՞նչպիսի գիտութեան կը տրուէ: Տրուած է հերոսը.—նա պէտք է աշխարհակալ լինէ, թագաւոր, փիլիսոփիայ, թէ բանաստեղծ: Այս կը լինէ նոյն անասելի կերպով բարդ ու վիճելի հաշիւնե-

րի հետհանքը, որոնք գոյութիւն կ'ունենան աշխարհի ու հերոսի միջև։<sup>1)</sup> Այսակից բնական է այն եզրակացութիւնն առնել, թէ մեծ մարդը միայն արտաքին ձևով կախումն ունէ այն պայմաններից, որոնք ըլջապատռմ են նրան. — Նա անպայման կը հանէ իր մեծութիւնը այս կամ այն ձևով։ Այսակերևան կը հանէ իր մեծութիւնը այս կամ այն ձևով։ Այսակերևան կից էլ ստացւում է այն անհրաժեշտ եզրակացութիւնը, թէ հերոսը չէ կարող կորչել ամբոխի մէջ, թէ ամբոխը չէ կարող հաստել նրա ոյժերը, արգելք լինել նրա անսովոր ձիւքերի եւրեան գալուն, թէ նրա հզօրութիւնը անսահման կերպով աւելի մեծ է, քան այն պայմանների գումարը, որոնց մէջ նրան վիճակուած է գործել։ Ով յաջողութիւն չէ ունեցել, այսինքն ով չէ յաղթել միջավայրին, նա չէ կարող հերոս ճանաչուել։ Եւ ուստի այս տողերը որբագործում են իրաքանչիւր աչքի ընկնող յաղթութիւնն առաջ երկրպագելին ու խոնարհուելը, ու ըսդիհու իրաքանչիւր որ իրաւունք է տալիս ենթադրելու, թէ այն մարդը, որը ունեցել է այդ յաջողութիւնը, հերոս է կամ մօտ է հերոսութեան գրութեանը։

Կարլելը իր՝ հերոսների մասին հեղինակած ուրուագծերը գրել է 65 տարի առաջ, երբ եւրոպական կեանքի պայմանները շատ աւելի, քան այժմ, նպաստում էին առանձին մարդկանց շափառնց բարձրացմանը և այն միջավայրի արհամարհմանը, որի մէջ նրանք գործում են։ Ստկայն իր ուրուագծերի զանազան մասերում նրանք գործում են։ Ստկայն իր ուրուագծերի զանազան մասերում նա երևան է հանում այն վախը, թէ նրա փորմուլան հեշտ կերպով կարող է դէպի ծայրայեղ չափազնցութիւններ տանել։ Առաջին կատակի համար նրա խօսքերը Դանտէի մասին։ «Ասուածային կատակիրդութիւնը գրել է Դանտէն, բայց այդ երկը իսկած տէին պատկանում է միայն նրա վերջնականօրէն աւարտումը։ Այսպէս է լինում միշտ։ Վերցրէք արհեստառոր զարրնին իւր երկաթով, իւր գործիքներով, իւր հմտութիւնով ու արուեստով, — նրանք համարիչ մարդիկ, որոնք ապրում էին անցեալում, այժմ աշխատում են այստեղ նրա հետ, ինչ որ նա պատրաստում է։ Բոլոր համարիչ մարդիկ, որոնք ապրում էին անցեալում, այժմ աշխատում են այստեղ նրա հետ, ինչպէս որ մեր բոլոր ինքն են իրօք աշխատում մեր բոլոր գործերի մէջ... Դանտէի այս բոլոր վեհ և միենոյն ժամանակ սարսափելի ու գեղացիկ զադափարները այն խորհրդագործութիւնների պտուղ են, որ անում էին նրանից առաջ ապրող բոլոր բարերարոյ մար-

<sup>1)</sup>) *Карлайль. Герой и геройическое въ исторіи 1898. 125.*



# ՄՈՒՐԾ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

(Նոր աբջան ՎՊ տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Տարեկան	10 ր.	Տարեկան	12 ր.	(32 ֆ.)
Կէս տարին 5 Տ40կ		Կէս տարին 7 Տ		(18 ֆ.)
ամսական	90 կ.	ամսական		(3 ֆ.)

Բաժանոցդագինը կարելի է վճարել նա՛նւ մասմաս(5—5 ր.), եթերորդ վճարը լի՞ում է մայիսին։ Ցարք, զպողոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, զիտացիների և բանուորների համար բաժանոցդագինն է (Մուսաստ.) Տ օրելի տարնկան, որ կարելի է վճարել մաս-մաս(4-4)ր։

Հասցեն. Տիֆլուս «Մորթ» Tiflis «Mourtch»

## ԽՄԲԱԳԲՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

1. Խմբագրութիւնը յառուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ մասնակի բառեր, յառաջ մասնակի տեսքում ու օսու բառեր, եւ թերթի միայն մի երեսի վրայ առանձնապես ուռ դաշտենի կէտաղբութեան, ուղղագրութեան եւ նոր պարեւորիւմները ուռուակի լինելու վրայ։ Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը։

2. Զընդունուած մեծ յօդուածները (36 երեսից աւելի) պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են։ Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել Հանապարատախմսը։ Փոքը յօդուածներն ու ուսանաւորները չեն վերադարձնուում։

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը։ Խմբագրութեան առանց պայմանների ուկարկուած ձեռագիրները համարուած են անվճարելի։

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը։

5. Խմբագրութեանը զանազան հացուամերով դիմող անձինը պէտք է պատասխանի համարուղարկեն նամակադրում կամ պոստային բլունի։

6. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ։

Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իրացանչնը ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի ուռաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով։ Նոր հասցէի պէտք է յաւանել նաև հին հասցէն։

Խմբագիր՝ Լեհոն ՍԱՐԳՍԵԱՆ







